Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

[redacted]

Ի. Գ. ՎԵՐԵՇՉԱԳԻՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ա. Շիրյամովի ընդհանուր խմբագրությամբ հանձնարարված է Համ. Լ. Կ. Յե. Մ-ի Կենտկոմի Ագիտ-պրոպի կողմից

Թարգ. Գար. ՀԱԿՈԲՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Յերևան — 1927

ԿՈՄՅԵՐԻՏ ԳՐԱԴԱՐԱՆ

Ի. Գ. ՎԵՐԵՇՉԱԳԻՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ա. Շիրյամովի ընդհանուր խմբագրությամբ
հանձնարարված է Համ. Լ. Կ. Յե. Մ-ի Կենտ-
կոմի Ագիտ-պրոպի կողմից

Թարգ. Գար. ՀԱԿՈԲՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1927

Գրաճեպվար № 63-բ   հ. 505   Տիրաժ 4000

Պետհրատի յերկրորդ տպարան Յերեվանում—198

I

ԱՌԱՋ ՄԵՐ ՅԵՐԿԻՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՅԻՆ ԹԱԳԱՎՈՐԸ, ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵՐՆ ՈՒ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԸ

Ո՞վ չի հիշում, թե ինչպիսի կառավարություն եր այդ։ Վերից մինչև վար, ամենաբարձր հիմնարկներից մինչև ամենաստորինը, ամենուրեք, այսպես ասած, «պատվավոր դասերի»—ազնվականների, վաճառականների և հոգևորականության ներկայացուցիչներն ու նըրանց արբանյակներն եյին բազմած։

Ճիշտ ե, Պետական Դումայում «գյուղացի պատգամավորներն» եյին «մասնակցում», զեմստվոյական ժողովներում—«ձայնավոր գյուղացիները», նահանգական դատարաններում «յերդվյալ գյուղացիներն» եյին դատում։ Բայց ինչ գյուղացիներ եյին դրանք։

Վերից—վար՝ գյուղական կուլակներ, նախկին գալավաներ ու յեկեղեցական յերեցփոխաններ։

Յերբ, շնորհիվ հեղափոխական կուսակցու-

թյունների ծայրահեղ ջանքերի, բանվորների ու գյուղացիների իսկական ներկայացուցիչներ ընկան պետական դումա և այստեղ նրանց շահերը պաշտպանել կամեցան, ցարական կառավարությունը կալանավորեց նրանց և Սիբիր ուղարկեց՝ հավիտյան աքսորի։

Թագավորի մոտ «մուժիկներն» ու «արհեստավորները» են պատիվը չունեյին։

Սակայն, բանվորներից ու գյուղացիներից վոմանք դեռ յերկար ժամանակ հավատում եյին թագավորին։ Նրանք կարծում եյին, թե «հայր թագավորը» հասարակ ժողովրդի կողմն է, միայն թե՝ նրա ականջին չեն հասնում այն լուրերը, թե ինչպես են տերերը տանջում այդ ժողովրդին։

Դեռ այն ել եյին կարծում, թե բանվորների ու գյուղացիների վիճակի դառը ճշմարտությունը թագավորի մինիստրներն ու մեծավորները դիտավորյալ կերպով ծածկում են նըրանից։

Յերբ բանվորների ապրուստը բոլորովին դժվարացավ և նրանց մեջ սկսեց հեղափոխական շարժումը զարգանալ, կառավարությունը նրանց մոտ վոստիկանական վարձկան և պրովոկատոր Գապոնին ուղարկեց։ Գապոնը կարողացավ կեղծավոր ճառերով բանվորների մեջ

մեծ ազդեցություն ձեռք բերել և ասում էր նըրանց, թե բանվոր դասակարգի ծանր վիճակը խաղաղ ճանապարհով կարելի չէ բարելավել և վոչ թե հեղափոխությունով, վոչ թե թագավորի ու կալվածատերերի դեմ ապստամբելով։

Յեվ ահա 1905 թ. հունվարի 9-ին Պետերբուրգի բանվորներն ու գյուղացիները Գապոնի դրդմամբ թագավորի անունով մի խնդրագիր կազմեցին իրենց կարիքների մասին, ու բոլորը, ծեր ու յերիտասարդ, խաչ ու խաչվառով թագավորի մոտ գնացին՝ իրենց ծանր կացությունը պատմելու։

Բայց բանվորներին թագավորի պալատին նույնիսկ մոտենալ չթողին։ Թագավորի հրամանով զորքը կրակ բացեց անզեն բանվորների վըրա և հարյուրավորներին սպանեց ու հաշմանդամ դարձրեց։

Այսպես թագավորը ցույց տվեց, վոր նա վոչ թե բանվորների, այլ նրանց ճնշողների— կապիտալիստների կողմն է։

Յերբ հողագրկության համար գյուղացիական խռովություններ սկսեցին տեղի ունենալ, թագավորը միշտ և անդավաճան կերպով կալվածատերերի կողմն էր կանգնում։ Իրենց փոքրիկ հողամասերում կարիքից խեղդված գյուղացիներն ամբողջ գյուղով դուրս էյին գալիս և

միացյալ ուժերով վարում էյին կալվածատերե-
րի հողերը։ Թագավորի հրամանով կազակներն
ու վոստիկանական ստրաժնիկները գնդակնե-
րով ու մտրակներով էյին հանգստացնում ան-
դեն «խռովարարներին»։

Այս բոլորից հետո միայն կույրերն ու խուլ-
երը կարող էյին չհասկանալ, վոր Թագավորը
հոգով-սրտով խոշոր կալվածատերերի կողմն է,
ընդդեմ հողազուրկ գյուղացիների։

Այլ կերպ էլ լինել չեր կարող։ Ախր Թա-
գավորն ինքն էլ խոշոր կալվածատեր ու գոր-
ծարանատեր եր, և հողն՝ աշխատավոր ժողովրդ-
դի, իսկ ֆաբրիկան ու գործարանը՝ պետու-
թյան ձեռքն անցնելու մեջ իրեն էլ վոչ մի օ-
գուտ չկար։

Ա՛յ, հենց դրա համար եր, վոր Թագավորը
կալվածատերերի ու կապիտալիստների հետ այդ-
պես բարեկամություն եր անում, իր իշխանու-
թյունը նրանց հետ եր կիսում և ամեն բանում
նրանց հետ մեկ եր։

Իսկ, վորպեսզի զորքը չկարողանար այդ
կարգերին հակառակ գնալ և աշխատավորների
կողմն անցնել, բանակում սպայական բոլոր պաշ-
տոնները հենց այդ կալվածատերերի, ազնվա-
կանների և բուրժուազիայի զավակներով էյին
փոխարինվում։

Ո՞վ չի հիշում, թե ինչպես ռուսական և ֆրանսական կապիտալիստների հաճույքի համար 1914 թ. թագավորը միլիոնավոր բանվորների ու գյուղացիների արյան սպանդանոց քըշեց։ Բայց համբերության բաժակը լցվեց։

Պետրոգրադում բանվորներն ապստամբեցին թագավորի դեմ, գյուղացիներից բաղկացած զորքը միացավ նրանց, և թագավորի իշխանությունը տապալվեց։

Դրանից հետո կապիտալիստները մենշևիկների ու սոցիալիստ-հեղափոխականների հետ փորձեցին՝ «դեմոկրատիկ հանրապետություն» անվան տակ իրենց իշխանությունը կազմակերպել, որի կառավարության մեջ էլի նույն կալվածատերերն ու կապիտալիստներն եյին մասնակցում։ Սակայն, նրանց չհաջողվեց հիմարացնել բանվոր դասակարգին ու գյուղացիությանը։

1917 Հոկտեմբերին բռնկվեց յերկրորդ հեղափոխությունը, և ամբողջ իշխանությունը Բանվորների ու Գյուղացիների պատգամավորների Խորհուրդների ձեռքն անցավ։

Այժմ տեսնենք, թե, ինչ է խորհրդային իշխանությունը և ինչ մասնակցություն ունին նրա մեջ բանվորն ու գյուղացին։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Ինչո՞ւ մի բուռը կապիտալիստներին ու կալվածատերերին, թագավորի գլխավորությամբ, այդքան յերկար ժամանակ հաջողվում եր իշխանությունն իրենց ձեռքը պահել:

Ի՞նչ ույժ ոգնեց գյուղացիներին՝ հող ձեռք բերելու և ինչո՞ւ մինչև 1917 թիվը գյուղացիների բոլոր ապստամբությունները հաջողություն չեյին ունենում:

2. Ինչպե՞ս եք դուք անցկացրել 1905 թվի հեղափոխության քսանամյակը:

Յեթե ձեր գյուղում կան 1905 թ. ապստամբությանը մասնակցողներ— նրանց հետ զրույց ունեցեք:

3. 1917 թ. Փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունների ժամանակ դուք վո՞րտեղ եյիք: Պատմեցե՛ք, թե ի՞նչ մասնակցություն են ունեցել նրանց մեջ ձեր քաղաքի, ֆաբրիկի ու գործարանի բանվորները կամ ձեր գյուղացիները:

ՈՎ ՎՈՉԻՆՉ ԵՐ, ՆԱ ՅԵ ԼԻՆԵԼՈՒ ԱՄԵՆ ԻՆՉ

1918 թ. հուլիսի 10 ին խորհուրդների համառուսական V համագումարի կողմից ընդունվեց մեր հանրապետության հիմնական որենքը (այլ կերպ՝ «Սահմանադրություն» է կոչվում) [1]։

Այս որենքը թղթի վրա ձևակերպեց, վավերացրեց բանվորների ու գյուղացիների 1917 թ. Հոկտեմբերի հեղափոխությունը, յերբ նրանք իրոք պետությունը կառավարելու գործը փաստորեն իրենց ձեռքն եյին առել։ Այդ որենքը հաստատեց, վոր Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության (ՌԽՖՍՀ) սահմաններում ամբողջ իշխանությունն աժմվանից պետք է պատկանի քաղաքային և գյուղական խորհուրդների մեջ համախմբված՝ յերկրի վողջ բանվոր ժողովրդին։

Այն բանվորներն ու գյուղացիները, վորոնք հին իշխանության որով պետական գործերին վոչ մի մասնակցություն չեյին ունեցել, նրանք պետության տերը դարձան։ Ռուսաստանը բան-

---

[1]) 1918 թվի Սահմանադրությունը, Խ. Ս. Հ. Մ. ստեղծելուն զուգընթաց, 1925 թ. մայիսի 11-ին իր մի քանի մասերում փոփոխության յենթարկվեց։ Սակայն, նախկին սահմանադրության բոլոր հիմնական կանոնադրություններն ամբողջությամբ մտան և 1925 թ. մայիսի 11-ի Սահմանադրության մեջ։

վրա գյուղացիական պետություն դարձավ, և այնտեղ իշխանությունը բանվորների ու գյուղացիների ձեռքն անցավ։ Ուրեմն, այնուհետև պետությունը ոչ թե կալվածատերերի, այլ միայն բանվորների ու գյուղացիների կարիքներն ու շահերը պետք է պաշտպաներ։

Դեռ ավելին, բուրժուազիայի ձեռքից խըլվեց այն բոլորը, ինչ որ նրա տիրապետության և իշխանության համար իբրև միջոցներ և հիմք էին ծառայում—հողերը, անտառները, ֆաբրիկաները, գործարանները, երկաթուղիները և այլն։ Բոլոր այս հարստությունները դարձան խորհրդային պետության սեփականություն, այսինքն՝ հենց նույն բանվորների ու գյուղացիների ընդհանուր սեփականություն

Ինչ վերաբերում է Ռուսաստանի նախկին տիրակալներին—կալվածատերերին ու կապիտալիստներին—նրանք այժմ պետական ոչ մի օրգանում մասնակցել չեն կարող։

1918 թվի Սահմանադրության մեջ ուղղակի ասված էր.—

«Շահագործողներին իշխանության ոչ մի օրգանում տեղ լինել չի կարող։ Իշխանությունն ամբողջապես ու բացառապես աշխատավոր մասսաներին ու նրանց լիա-

գոր ներկայացուցչության Բանվորների, Զինվորների ու Գյուղացիների պատգամավորների Խորհրդին—պետք է պատկանի» (հոդ. 7-րդ)։

Այսպիսով, նախկին ցարական Ռուսաստանի բանվոր դասակարգին, գյուղացիների դաշնակցությամբ, կատարելապես հաջողվեց կյանքի մեջ իրականացնելու «Ինտերնացիոնալի» սքանչելի խոսքերը.—

«Ով վոչինչ եր,—
Նա յե լինելու ամեն ինչ»

Բուրժուական յերկրներից—Ամերիկայից, Անգլիայի, Ֆրանսիայի և այլ յերկրների նկատմամբ, ուր աշխատանքն ամոթ է համարվում, մեր յերկիրն այն առավելությունն ունի, վոր մեզ մոտ, Խորհրդային Միության մեջ աշխատանքն առանձին պատիվ ու հարգանք է վայելում։ Աշխատավորների առաջ կրթական հիմնարկների դռները լայն բացված են, և նրանց ամեն տեսակի արտոնություններ և առավելություններ են տրվում։

Հարկավոր է միայն ուշադրությամբ դիտել մեր յերկրի կյանքը, և այն ժամանակ միանգամայն պարզ կլինի, վոր վողջ պետական իշխանությունն իսկապես ամբողջովին աշխատավորներին ու միմիայն նրանց է պատկանում։

Բայց ինչո՞ւ բանվորներն ու գյուղացիները իշխանությունն իրենց ձեռքն են առել:

Բանվորա-գյուղացիական իշխանության նըպատակը, պրոլետարիատի դիկտատուրայի նպատակը—մեծ ու գեղեցիկ նպատակ է: Բանվորներն ու գյուղացիները իշխանությունը նրա համար են իրենց ձեռքն առել, վոր աշխատավորական հասարակակարգ— սոցիալիզմ կառուցեն, ուր աշխատանքը հասարակության գոյության ու զարգացման միակ աղբյուրն է լինելու, ուր չեն լինելու վոչ շահագործողներ, վոչ ել շահագործվողներ:

Ուստի մեր Սահմանադրությունը, ապահովելով պրոլետարիատի դիկտատուրան, այսինքն՝ բանվոր դասակարգի ժամանակավոր, բացառիկ իշխանությունը, միաժամանակ նշում է, վոր այդ դիկտատուրան անհրաժեշտ է բուրժուազիայի վրա վերջնական հաղթանակ տանելու համար.—

Մարդու կողմից մարդուն շահագործելը վոչնչացնելու և կոմմունիզմն իրականացնելու համար, վորի ժամանակ չի լինի վոչ դասակարգերի բաժանում, վոչ ել պետական իշխանություն (Սահմանադրության 1 հոդ.):

Հենարան ունենալով մեր պետության սահ-

մանադրությունը (հիմնական օրենքը), բանվորները ու գյուղացիները Հոկտեմբերյան հեղափոխության առաջին իսկ օրից յերկրում սոցիալիստական շինարարություն են անում։

Անցյալի դասերը նրանց սովորեցրել են, վոր համերաշխ ու ներդաշնակ աշխատանքով միայն, պրոլետարիատի ու գյուղացիության սերտ դաշնակցությամբ միայն նրանք կարող են իշխանությունն իրենց ձեռքը պահել և մարդկության մեծ անելիքը — կոմմունիզմն իրականացնել։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՑԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Թվեցեք, թե՝ «անաշխատ տարրերից» ովքեր են ձեր գյուղում ապրում։ Մատնանշեցեք նրանց անուններն ու զբաղմունքները։ Գյուղխորհրդում տեղեկացեք՝ մտցված են, արդյոք այդ անձնավորությունները խորհուրդների ընտրություններին մասնակցելու իրավունքից զրկված քաղաքացիների ցուցակի մեջ։

2. Կարո՞ղ են, արդյոք, անաշխատ տարրերը արհմիության մեջ մտնել, կոոպերատիվ վարչությունների ան-

դամ լինել և այլն։ Յեթե չեն կարող, ապա ինչու։

3. Խորհրդային Միության մեջ գյուղացիների համար սահմանված ինչ արտոնություններ և առավելություններ են ձեզ հայտնի, վորոնցով չեն կարող օգտվել վոչ կուլակը, վոչ ել առեվտրականը։

4. Ի՞նչ արտոնություններ են տըրված չքավոր գյուղացիներին՝ գյուղհարկի, գյուղվարկի, հողաշինարարության, ապահովագրման, փայտ ստանալու և այլ ասպարեզներում։

5. Ինչի վրա յե հիմնվում ԽՍՀՄ աշխատավորների տիրապետությունն ու իշխանությունը։ Ի՞նչ ուժերով ու միջոցներով ե պահվում այդ իշխանությունը։

III

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հեշտ ե հայտարարել, թե ամբողջ իշխանությունը բանվորներին ու գյուղացիներին պետք ե պատկանի,—բայց վորքան դժվար ե այդ վորոշումը կյանքի մեջ կիրառել և այն ել այնպես

կիրառել, որ աշխատավորների թշնամիներից վոչ մեկը չկարողանա սպրդել իշխանության մեջ, որ բանվորներն ու գյուղացիները միշտ կարողանան պահել ու պաշտպանել իրենց պետությունը։

Հենց այս պատճառով էլ խորհրդային Սահմանադրությունը բանվորներին ու գյուղացիներին քաղաքական ազատությունների յերաշխիքներ (այսինքն՝ ապահովություններ) ե տալիս. խոսքի ազատության, խղճի և մամուլի ազատության, հասարակությունների և միությունների ժողովների ազատության յերաշխիքներ։ Այս ազատություններով միայն աշխատավորները կարող են լիովին ոգտվել։ Ազատություններով ոգտվելը միայն նրանց ե ապահովվում և այն էլ վոչ թե խոսքով, այլ և գործով։ Աշխատանքի թշնամիներն, ի վնաս բանվորների ու գյուղացիների շահերի, ազատություններով ոգտվելու հնարավորություններից զրկված են։

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ամբողջ խորհրդային պետության հիմքը—խորհրդային սկզբնական բջիջներն են հանդիսանում՝ բանվորների և կարմիր բանակայինների պատգամավորների քաղաքային խորհուրդները

և գյուղացիների պատգամավորների գյուղական խորհուրդները։

Այստեղից ուղիղ յեզրակացություն. վորպեսզի խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ ամբողջ իշխանությունը, Խորհրդային կառուցվածքի վարից մինչև վեր, իսկապես բանվորներին ու գյուղացիներին պատկանի, դրա համար շատ կարևոր է պաշտպանել բանվորա-գյուղացիական իշխանության հիմունքը—Խորհուրդները—ուրիշ (օրինակ՝ կուլակ) տարրերի ճնշումից։ Կարևոր է, վոր մեր Խորհուրդները զուտ բանվորագյուղացիական կազմակերպություններ լինեն, վոր բանվորների ու գյուղացիների թշնամիները կամաց-կամաց նրանց մեջը չխցկվեն, չսողոսկեն։

Այս պատճառով Խորհրդային Հանրապետության հիմնական օրենքը հանրապետության մի շարք քաղաքացիների զրկում է Խորհուրդների համար ընտրելու և ընտրվելու իրավունքից։

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆՏՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՈՎՔԵՐ ԵՆ ԶՐԿՎԱԾ

Այս մարդկանց շարքին ամենից առաջ պատկանում են շահագործական նպատակնե-

րով վարձու աշխատանքով օգտվողները։

Այսպես են, օրինակ, իրենց հիմնարկությունների մեջ մի քանի վարձու վարպետներ և բանվորներ պահող՝ շինարարական աշխատանքների կապալառուները, զանազան գործարանատերերն ու ֆաբրիկատերերը, զանազան տնայնագործական (կոշկակարի, ձիասարքի, դերձականոցի և այլն) արհեստանոցների տերերը, վորոնք իրենց հիմնարկության մեջ մի քանի վարձու վարպետներ ու բանվորներ ունեն, փոխադրական ձեռնարկություններ պահողները, վորոնք վարձու կառապանների աշխատանքով են օգտըվում և այլն։

Կարևորն այն է, վոր բոլոր այդ մարդիկ իրենց շահի համար են ուրիշի աշխատանքով օգտվում։ Դրանցից պետք է զանազանել խորհրդային այն բանվորներին, գյուղացիներին և ծառայողներին, վորոնք վոչ թե շահի համար, այլ կարիքից ստիպված են վարձու աշխատանքով օգտվում։

Ընտրական իրավունքներից զրկված մյուս խմբակի մարդկանց թվին են պատկանում անաշխատ յեկամուտով ապրողները, օրինակ՝ դրամագլխի տոկոսներով, ձեռնարկությունների յեկամուտներով, գույքի ու այլոց հասույ-

թով ապրողները։ Բոլոր այս մարդկանց բանվորների ու գյուղացիների շահերը խորթ են ու թըշնամական։ Այս պատճառով էլ օրենքը զրկել է նրանց խորհրդային շինարարությանը մասնակցելու վորևէ հնարավորությունից։

Հետո, ընտրական իրավունքից զրկվում են նաև մասնավոր առևտրականները, առևտրական և վաճառականական զանազան միջնորդները։

Կրոնավորները և յեկեղեցու ու զանազան դավանանքների հոգևոր ծառայողները նույնպես չեն կարող ընտրել և ընտրվել խորհուրդների համար։

Չի կարելի վստահել նաև նախկին վոստիկանության ծառայողներին և գործակալներին, ժանդարմներին և պահնորդական բաժնի ծառայողներին, նամանավանդ՝ Ռուսաստանում թագավորող՝ Ռոմանովների տան անդամներին։

Այս պատճառով ընտրական իրավունքից զրկվում են ցարական և հակահեղափոխական կառավարությունների բոլոր բարձրաստիճան չինովնիկները, նախկին գավառապետները, պրիստավները, վոստիկանական դեպարտամենտի նախկին պաշտոնյաները, ժանդարմները, պահնորդական բաժնի ծառայողները, այլև դատաստանա-

կան պալատների «գործունեությունը» ղեկավարող դատախազները։

Ցարական և հականեղափոխական կառավարությունների մյուս չինովնիկներն ընտրական իրավունքից չեն զրկվում։ Սակայն, յեթե այդ չինովնիկներից մեկն ու մեկն իր ծառայությունով կամ գործունեությամբ չի ապացուցել, վոր ինքը խորհրդային իշխանությանը նվիրված է, նրան ընտրական իրավունքից զրկվածների ցուցակի մեջ պետք է մտցնել։

Միանգամայն հասկանալի յե, վոր խորհուրդների մեջ ընտրելու և ընտրվելու իրավունքից որենքն այն մարդկանց է զրկում, վորոնք սահմանված կարգով ճանաչված են հոգեկան հիվանդներ, կամ խելագարներ, ինչպես և նրանց, ովքեր խնամակալության տակ են գտնվում։

Վերջապես, ընտրական իրավունքից զրկված են նաև նրանք, ովքեր դատապարտված են շահախնդրական և արատավորող հանցագործությունների համար (պետական գանձարանը կողոպտողները, վատնիչները, գողերը, թալանչիները և այլն)։ Քրեական որենքն ասում է, վոր ընտրական այդ իրավազրկությունը կարող է վորոշվել դատարանով, 5 տարուց վոչ պակաս ժամկետով։ Իրավազրկության դատապարտվածների համար այս ժամկետը հաշվվում է

վոչ թե վճիռը կայացած օրից, այլ պատիժը վերջացրած կամ պայմանական կերպով վաղաժամ ազատված օրից։

Ահա քաղաքացիների բոլոր գլխավոր խըմբակները, վորոնք, ըստ խորհրդային օրենքների, զրկված են ընտրական իրավունքներից։

Ճիշտ ե, կյանքի մեջ ուրիշ շատ այլ և այլ դեպքեր են պատահում, բայց այդ բոլորն օրենքի մեջ մեկիկ-մեկիկ թվելն անհնար ե։

Ճիշտ վորոշում սահմանադրության 14-րդ հոդվածը կարող ե թելադրել։ Հոդվածն այս ե ասում.—

«Ղեկավարվելով աշխատավորների շահերով, ՌՍՖՍՀ առանձին անձնավորություններին և առանձին խմբակներին զրկում ե այն իրավունքներից, վորոնցով նրանք ոգտվում են ի վնաս սոցիալիստական հեղափոխության շահերի»։

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԸՆՏՐՈՒՄ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Խորհուրդների համար ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն. 1) արդյունաբերության, առևտրի, գյուղատնտեսություն և այլն արտադրական և հանրոգուտ աշխատանքով պարապող յերկու սեռի բանվորներն ու ծառայողները (այսինքն՝

հավասար կերպով թե տղամարդիկ, թե կանայք). 2) շահագիտական նպատակով վարձու աշխատանքից չօգտվող գյուղացիներն ու հողագործ – կոզակները. 3) կարմիր բանակայիններն ու կարմիր նավաստիները։

Ընտրական իրավունքով օգտվում են նաև նրանք, ովքեր բանվորների ու ծառայողների տնային տնտեսությամբ են պարապում (կանայք, մայրեր և այլն), ինչպես և աշխատունակությունը կորցրած բոլոր բանվորները, ծառայողները, գյուղացիները և կարմիր բանակայինները (աշխատանքի հաշմանդամները, պատերազմի հաշմանդամները)։

Թեև օրենքը պայման է դնում, վոր ընտրողներն անպատճառ Խորհրդային Հանրապետության քաղաքացիներ պետք է լինեն, բայց հենց այդ տեղ էլ հիշատակում է, վոր խորհրդային քաղաքացիների թվի մեջ դեռ չմտածներից կարող են ընտրել և ընտրվել նաև արտասահմանցի այն հեղափոխականները, վորոնք, հալածվելով իրենց կառավարություններից, ԽՍՀՄ-ում ապաստան են գտել։

Այս վորոշումով մեր հանրապետությունը բանվորների ու գյուղացիների միջազգային յեղբայրության հիմաքարն է դնում։

Խորհրդի համար ընտրելու և ընտրվելու իրավունք ձեռք բերելու համար հիմնական օրենքն էլի մի պայման է դնում. ընտրության օրն ընտրողը պետք է լինի 18 տարեկանից վոչ պակաս։

ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

«Մամուլի ազատություն» թղթի վրա թույլատրված է բուրժուական բոլոր յերկիրներում։ Բայց իրականում միշտ այնպես է յեղել, վոր բանվորները վոչ մի կերպ չեն կարողացել ոգտվել «մամուլի» այդ «ազատությունից»։

Բանն այն է, վոր տպագրական հաստոցներ (դազգահ) պահելը, թերթեր, հանդեսներ, բրոշյուրներ և գրքույկներ հրատարակելը, հեղինակներին, ժուռնալիստներին և լրագրողներին վարձատրելը խոշոր կապիտալներ են պահանջում։

Կապիտալիստներն ոգտվելով այս հանգամանքից, տպագրական հրատարակչական ամբողջ գործն իրենց ձեռքն են առել։ Հասկանալի յե, վոր կապիտալիստներն ու իրենց վարձկանները իրենց թերթերում և գրքերում միայն իրենց շահերն են քարոզում և պաշտպանում՝ ընդդեմ բանվորների ու գյուղացիների շահերի։

Բուրժուական կարգերի վոչ մի սուր պարսավանք, բանվորների ու գյուղացիների վոչ մի

հետևողական պաշտպանություն այդ գրքերում չեն թույլատրվում։

Բուրժուական մամուլի ազատությունը ոչ այլ ինչ է, բայց յեթե բուրժուազիայի կողմից «իրենց» տպարաններում, «իրենց» թղթի վրա բանվորների ձեռքով, հենց նույն բանվորների դեմ ուղղված հոդվածներ և հաղորդագրություններ տպագրելու համար զավթած իրավունք։

Ահա թե ինչու Խորհրդային Միության մեջ աշխատավորներին և նրանց շահերը պաշտպանողներին «իրենց մտքերն արտահայտելու իսկական ազատությունն» ապահովելու համար

«Վոչնչացված է մամուլի կախումը կապիտալից և թերթեր, բրոշյուրներ, գրքեր ու տպագրական բազմաթիվ այլ աշխատություններ հրատարակելու տեխնիկական և նյութական բոլոր միջոցները բանվոր դասակարգի և գյուղացիների ձեռքն է տրված, և ամբողջ յերկրում ազատ տարածելը նրանց համար ապահովված է». (1925 թ. սահմանադրություն, հոդ. 5-րդ)։

Դատարկ խոսքեր չեն սրանք։ Սահմանադրության 5 րդ հոդվ-ծը կյանքի մեջ կիրառված է, և Խորհրդային Միության մեջ մենք այժմ բանվորագյուղացիական հարյուրավոր թերթեր,

200 հազարից ավելի բանվորական և գյուղացիական թղթակիցներ (բանթղթակիցներ և գյուղթղթակիցներ) ենք տեսնում, վորոնք կուսակցության ղեկավարությամբ համարձակորեն պաշտպանում են Խորհրդային շինարարության և բանվորագյուղացիական ժողովրդի շահերը։ Ամեն մի ֆաբրիկում ու գործարանում խորհրդային ամեն մի հիմնարկում, ամեն մի գավառակում բանվորների ու գյուղացիների ձեռքով գրվում և լույս են ընծայվում իրենց պատի լրագրերը։ Տարեկան միլիոնավոր օրինակներով գրքեր և բրոշյուրներ են հրատարակվում ու վողջ Միության մեջ տարածվում, վորոնք հատկապես բանվորների ու գյուղացիների շահերի համար են գրված։ Վոչ մի յերկիր չի կարող պարծենալ բանվորագյուղացիական ազատ խոսքի այսպիսի չտեսնված ծաղկումով։

Բայց Խորհրդային Հանրապետությունը բանվորագյուղացիական հանրապետություն է, և դրա համար էլ այստեղ ազատությունով միայն բանվորա գյուղացիական մամուլն է օգտվում։ Կապիտալիստները, կալվածատերերը և, ընդհանրապես, խորհրդային իշխանության թշնամիները իրավունք չունեն մեր յերկրում իրենց թերթերը, գրքերն ու բրոշյուրներն ազատ տպագրելու և տարածելու, յեթե դրանք բանվորների ու գյու-

ղացիների շահերի դեմ են ուղղված։ Այս օրենքը խախտելու համար ծանր պատիժ է սպառնում բանվորագյուղացիական իշխանության այն թըշնամիներին, ովքեր լույս կընծայեն իրենց վնասակար աշխատությունները։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Պատի լրագիր կա՞ ձեր գյուղում։ Ուշի-ուշով աչքի անցկացրեք վերջին համարի բովանդակությունը։ Ի՞նչ դիտողություններ եք դուք ամենից շատ հավանել և ինչո՞ւ։

Պատի լրագիրը գյուղում ի՞նչ անելիքներ ունի։

1. Ի՞նչ նշանակություն ունի գյուղթղթակիցների շարժումը գյուղի սոցիալիստական շինարարության համար։ Ինչպիսի՞ն պետք է լինի գյուղթղթակիցը։

ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Հանրապետության բոլոր քաղաքացիներին խղճի իսկական ազատություն է տրված, այսինքն՝ նրանք ինչ կրոն ուզենան՝ կարող են պաշտել, կամ՝ ամենևին վոչ մի կրոն

չճանաչել։ Վորպեսզի խղճի ազատությունը լոկ թղթի վրա չմնա, ինչպես ուրիշ յերկիրներում է, ուր իշխանության գլուխ բուրժուազիան է կանգնած, յեկեղեցին բաժանված է պետությունից։ Կրոնը ճանաչվում է իբրև յուրաքանչյուր քաղաքացու մասնավոր գործ. կուզի-կհավատա, չի ուզի — չի հավատա։ Իսկ վորպեսզի առաջվա պես դպրոցներում յերեխաների գլուխները զանազան կրոնական ուսմունքներով չլցնեն, դպրոցը բաժանված է յեկեղեցուց, և այնտեղ «կրոնի» դասավանդություն չի լինում։

Մեր թշնամիներն ասում են, վոր խորհրդային իշխանությունը կրոնի հալածանք է հայտարարել և հալածում է հավատացյալներին։ Ակնհայտ մտածածին բան է այդ - մեզնում կրոնի վոչ մի հալածանք տեղի չունի։ Թե քրիստոնյաները, թե մահմեդականները, թե կռապաշտները — առհասարակ ինչ տեսակի կրոնի ներկայացուցիչներ էլ ուզում են՝ լինեն, միանգամայն ազատ կերպով կարող են պաշտել իրենց կրոնի ուսմունքը՝ «ժամասացություններն» իրենց կրոնական կանոնների համաձայն տանել։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Կարո՞ղ է, արդյոք, գյուղական

հասարակությունը յեկեղեցի շինելու կամ նորոգելու, կամ թե՛ քահանա պահելու համար իր բյուջեյի մեջ ծախսի հոդված մտցնել։

2. Դուք կարդում եք, արդյոք, «Անաստված» («Безбожник») հանդեսը։ Ի՞նչ նպատակներ է հետամտում այդ թերթը։ Այն տարածելու մեջ դուք որև է մասնակցություն ունե՞ք, արդյոք։

3. Կոմյերիտական անկուսակցական աղջկա հետ յեկեղեցում եր պսակվել։ Յերբ այդ բանի համար սկսեցին նրան կշտամբել, նա հայտնեց, վոր իր վարմունքը միանգամայն իրավացի յե, վորովհետև մեր սահմանադրությունը խղճի ազատություն է ապահովում,ե՞լի։

Բացատրեցե՛ք, թե այս դատողության անճշտությունն ինչն է։

4. Բուրժուական յերկիրներում մամուլն ում շահերին է ծառայում։ Այնտեղ բանվորների ու գյուղացիների համար մամուլի ազատություն կա՞, արդյոք։ Նկարագրեցե՛ք փաշիստների կողմից բանվորական թերթերի խմբագրատներ ավերելու ձեզ ծանոթ դեպքերը։

5. Ի՞նչ միջոցներով է ապահովվում ԽՍՀՄ-ում բանվորա-գյուղացիական մամուլի ազատությունը։

ԺՈՂՈՎՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Ժողովների, միտինգների, ցույցերի և այլն ազատությունը նույնպես խոշոր նշանակություն ունի աշխատավորների համար։ Ահա թե ինչու բուրժուական պետությունները, ազատություն հայտարարելով, հենց այստեղ իրենց հիմնական օրենքների մեջ զանազան սահմանափակումներով այդ ազատությունը վոչնչի յեն հասցրել։

Բացի այդ, բուրժուական յերկրներում ժողովրդական մեծ ժողովների համար բանվորների ու գյուղացիների համար շենքեր ստանալն այնքան էլ հեշտ չի. այդպիսի շենքեր ամեն անգամ չի կարելի ճարել. Նրանք մեծ գումարներ արժեն և բացի այդ, նրանց տերերը - կապիտալիստները, միաբերան հրաժարվում են բանվորներին շենքեր տալուց։ Իսկ բաց յերկնքի տակ հավաքվելը հաճախ (ձմեռ ժամանակ, անձրևային յեղանակի) անհնարին է լինում. յերբեմն էլ այդպիսի ժողովները բուրժուական իշխանության կողմից ուղղակի արգելվում են։

Ահա թե ինչու դուրս է գալիս, վոր բուրժուական յերկրներում ժողովների ազատությու-

նը թղթի վրա յե հայտարարված, իսկ աշխատավորներին՝ հավաքվել չի կարելի, տեղ չկա։ Իսկ այն դեպքերում, յերբ աշխատավորներին հաջողվում ե հավաքվել, բուրժուական իշխանությունները հետապնդում են, վորպեսզի այդ ժողովներում՝ կապիտալիստներին, կալվածատերերին ու նրանց կառավարություններին հակառակ «խռովարար» ճառեր չասվեն։

Խորհրդային իշխանությունն այդ կարգը միանգամայն վերացրել ե։ Բոլոր քաղաքացիներին վերապահելով ժողովներ, միտինգներ, թափորներ կայացնելու և այլ իրավունքներ, խորհրդային Սահմանադրությունը (հոդ, 6-րդ) միաժամանակ նշում ե, վոր ժողովրդական ժողովներ կայացնելու համար բոլոր հարմար շենքերը բանվորների և գյուղացիների տրամադրության տակ են դրվում։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Վերջին ժամանակ ինչ ցույցերի, ինչ միտինգների յեք դուք մասնակցել։

Նկարագրեցեք ցույցը, պատմեցեք, թե ինչ եյին խոսում միտինգում։

2. Բուրժուական կառավարությունը ինչպես ե վերաբերվում ֆաշիստ-

ների կողմից կազմակերպված ցույցերին։ Ինչո՞ւ չե նրանց պաշտպանում, իսկ բանվորական ժողովները՝ ցրում։

3. Արտասահմանում ժողովների ազատություն կա՞, արդյոք։

4. Բանվորներն ու գյուղացիները մեզ մոտ, ԽՍՀՄ·ում ինչո՞ւ յեն ցույցեր սարքում։

Նկարգրեցե՛ք ձեզ ծանոթ ցույցերից միքանիսը։ Խորհրդային իշխանությունը դեպի այդ ցույցերն ինչպես ե վերաբերվում։

ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային հանրապետության մեջ ամբողջ իշխանությունը, ամբողջ հողը, բոլոր ֆաբրիկաններն ու գործարանները աշխատավորներին են պատկանում։ Կապիտալիստների և կալվածատերերի պետական և տնտեսական տիրապետությունը վոչնչացված ե։ Ուստի մեզանում այժմ աշխատավորներին թշնամի վոչ մի իշխանություն չկա և վոչոք չի կարող աշխատավոր ժողովրդին արգելել՝ զանազան ընկերությունների և միությունների մեջ համախմբվել։

Խորհրդային իշխանության հիմնական անելիքը — սոցիալիստական շինարարությունն ե։ Սա-

կայն այդ անելիքը մեն-մենակ կուսակցության ուսերի վրա տանելն անհնարին է, ինչքան էլ բազմանդամ լինի այն։ Այս խնդրի լուծմանը պետք է մասնակցեն բոլոր բանվորներն ու գյուղացիները, յերկրի ամբողջ աշխատավոր ժողովուրդը։ Ուստի խորհրդային իշխանությունը խիստ շահագրգռված է աշխատավորների ինքնագործունեության զարգացմամբ, բանվորների ու գյուղացիների ընդհանուր և համերաշխ ջանքերով, նոր տնտեսություն և նոր կենցաղ կառուցելու գործով։

Խորհրդային իշխանությունն աշխատավորների մեջ ամեն կերպ խրախուսում և պաշտպանում է լավագույն կենցաղի ու տնտեսության հասնելու համար ընկերություններ և միություններ հիմնելու ձգտումները։ Այսպես են՝ սպառողական և վարկային կոոպերատիվները, գյուղատնտեսական ընկերություններն ու արտելները, գյուղացիական փոխադարձ օգնության կոմիտեները և այլն։ Այսպես են բանվորների և ծառայողների արհեստակցական միությունները։ Այսպես է, օրինակ, գյուղական վայրերում գյուղատնտեսական ու անտառային բանվորների արհեստակցական միությունը («հողանտառ միությունը»)։

Այս բոլորը և սրանց նման ընկերություն-

ներն ու միությունները ընդարձակ ցանցով ընդգրկել են խորհրդային Միությունը։ Նրանք լայն իրավունքներ և առավելություններ են վայելում, և պետական հիմնարկներն ամեն կերպ նրանց աջակցում և արտոնություններ են տալիս։

Պարզ է, որ սրան զուգընթաց, Խորհրդային իշխանությունը թույլ չի տա, որ հանրապետության մեջ այնպիսի կուսակցություններ, ընկերություններ և միություններ հիմնվեն, որոնք, բոլորին հայտնի, էսեռական և մենշևիկական հակահեղափոխական կազմակերպություններ կամ, օրինակ, կուլակների «գյուղացիական միության» պես թշնամի լեն բանվորագյուղացիական իշխանությանը։

Նման միություններ հիմնելն ու կազմակերպելը մեր օրենքները խիստ կերպով են հետապնդում։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Մանրամասն կերպով գրեցեք այն արհեստակցական միության անեւները, որին դուք անդամ եք։ Ի՞նչ մասնակցություն ունեք դուք այդ միության աշխատանքների մեջ։

2. Ինչո՞ւ Վ. Ի. Լենինն արհմիու-

թյունները «կոմունիզմի դպրոց» են անվանել։

3. Ինչո՞ւ բանվորների և գյուղացիների համար անհրաժեշտ է զանազան ընկերությունների և միությունների մեջ համախմբվելը։ Նրանք մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու գործում ի՞նչ նշանակություն ունին։

4. Ի՞նչ բան է գյուղատնտեսական և անտառային բանվորների միությունը (հողանտառմիությունը) և ի՞նչ անելիքներ ունի այն։

5. Ի՞նչ բան է աշխատավոր ժողովըրդի ինքնագործունեյությունը և մեր յերկրին ինչու՞ հարկավոր է այն։ Գյուղացիական փոխադարձ օգնության ընկերություններն ի՞նչ նպատակներեն հետապնդում, ինչպե՞ս են կառուցված և ինչպե՞ս են աշխատում նրանք։

6. Ինչո՞ւ մեզնում բուրժուազիային, կուլակներին և կապիտալիստներին չի թույլատրվում իրենց միություններն ու ընկերությունները հիմնել։ Ցույց տվեք ձեզ ծանոթ՝ նման հակահեղափոխական ընկերությունների որինակներ։ Այդ ընկերություններն

ի՞նչ նպատակներ են առաջադրել իրենց։

7. Կազմեցեք ձեզնում միությունների և ընկերությունների ցուցակը։ Նրանց աշխատանքներին դուք մասնակցո՞ւմ եք, արդյո՞ք, և ինչով ե արտահայտվում այդ մասնակցությունը։

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Բանվորների և գյուղացիների իշխանությունն ամրապնդելու համար, առանձնապես կարևոր ե աշխատավորների ազատ մուտքը դեպի գիտությունը — դպրոցները։

Հին ժամանակ թագավորին, կալվածատերերին ու կապիտալիստներին ձեռնտու յեր ժողովրդին խավարի ու տգիտության մեջ պահել։ Աշխատավոր մասսաների մեջ արմատանում եյին զանազան սնահավատություններ, աստվածապաշտություն, «հանդերձյալ կյանքում դրախտ գնալու» հավատ և այլն։

Ուսումը միայն բուրժուազիան եր ստանում, իսկ յերկրում դպրոցները շինված եյին այնպես, վոր վոչ բանվորին գիտություն տան, վոչ ել գյուղացուն։ Միջնակարգ բարձրագույն դպրոցներ մտնել ցանկացող բանվորների և գյուղացիների դեմ բազմաթիվ արգելքներ և խոչնդոտներ եյին հարուցվում։

Ահա թե ինչու «մուժիկների» (շինական, ռամիկ) «արհեստավորների» մեջ գիտություն ձեռք բերելու և մարդ դառնալու դեպքերը չափազանց հազվագյուտ էյին: Բացի այդ, բարձրագույն կրթությունը չափազանց թանգ էր և բանվորների ու գյուղացիների գրպանի բանը չէր բոլորովին: Բարձրագույն կրթություն ստանալը —բժիշկ, ճարտարապետ և այլն դառնալը,—շատ և շատ հարուստների, այսինքն՝ դարձյալ նույն կալվածատերերի, գործարանատերերի և վաճառականների զավակներին էր միայն մատչելի:

Զարմանալու՞ բան է, արդյոք, որ ցարական Ռուսաստանում բոլոր փոքր ի շատե աչքի ընկնող պաշտոնները,—ճարտարապետների, բըժիշկների, դատավորների ու այլ տեղերը սովորաբար բուրժուազիայի ներկայացուցիչներն էյին գրավում:

Պարզ բան է, որ այդ մարդկանց բոլորովին վայել չէր պաշտպանել բանվորների և գյուղացիների շահերը: Իրենք ժողովրդի ունեոր դասի ծագում ունեցող մարդիկ էյին ու միշտ շահագործողներին էյին նեցուկ լինում և ամբողջովին բուրժուական պետության կողմը պաշտպանում:

Խորհրդային իշխանությունը խիստ շահագրգռված է, որ նման բաներ չլինեն այլևս, որ-

պեսզի ընդհակառակը, միայն բանվորներն ու գյուղացիները սովորեն պետության մեքենան կառավարելը։

Խորհրդային իշխանության գլխավոր անելիքներից մեկն այն է, որ իր մարդկանց— բանվորներին և գյուղացիներին որքան կարելի է շուտ մասնագիտական գիտելիքներ տա։

Իսկ դրա համար պետք էր, որ կրթությունը բանվորներին և չքավոր գյուղացիներին մատչելի, այսինքն՝ ձրի դառնար։

Այժմ հազարավոր բանվորներ ու գյուղացիներ բանվորական ֆակուլտետներում և բարձրագույն հատուկ կրթական հիմնարկներում են սովորում։ Ուսումը նրանց համար միանգամայն ձրի է և, բացի այդ, նրանք նպաստ, բնակարան են ստանում և այլ արտոնություններ ունեն։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՑԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Զանազան մասնագիտություններ բարձրագույն կրթական հիմնարկներ ավարտող բանվորա-գյուղացիական յերիտասարդությունն իրեն ինչ նպատակներ պետք է առաջադրի։

2. Խ. Ս. Հ. Մ.-ին ինչու համար են պետք մասնագետ-ճարտարապետները, գյուղատնտեսները, անտառագետները հողաշինարարները և այլն։ Նրանք ինչպես պետք է օգտագործվեն։

3. Կուսակցությունն ինչ խորհուրդ է տալիս՝ մասնագետների հետ վարվելու համար։

IV

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՄԵՆԱԱԶԱՏ ՅԵՐԿԻՐՆ Է

Մոտ ժամանակներս մեր լրագրում գրված եր, թե ինչպես խուլ անկյունում ընկած Կարելի փոքրիկ գյուղացիները քաղաքից յեկած բանվորի առաջարկին՝ նվիրաբերել գործադուլող գերմանացի բանվորների օգտին՝ պատասխանել եյին.—

«Գերմանացիներին մենք նվեր չենք տա.—Նրանք մեր թշնամիներն են, մենք նրանց հետ չորս տարի կռվել ենք»։

Կարելի գյուղացիները չարաչար սխալվում են. գերմանացի բանվորները խորհրդային բանվորներին թշնամի չեն, այլ մտերիմ-ընկերներ են։ Նրանք իրար մեջ բաժանելու վոչինչ չունեն և իրար հետ կռվելու յել բան չունեն։ Նրանց

ընդհանուր թշնամին կապիտալիստներն են։ Այդ նրանք էյին, վոր բանվորներին ու գյուղացիներին պատերազմի դաշտ քշեցին։ Ա՛յ, կապիտալիստների դեմ, իսկապես, պետք է կռվել և այդ կռվում մեկ-մեկու զորավիգ լինել։

Խորհրդային իշխանությունը գործին այդպես էլ նայում է։ Նրա համար բոլոր բանվորներն ու գյուղացիները,—լինեն դրանք գերմանացիներ, ֆրանսացիներ, անգլիացիներ, թե չինացիներ,—անխտիր բոլորն էլ հավասար են և թանգ։

ԱՇԽԱՏԱՎՈՐ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Այդ պատճառով, խորհրդային իշխանությունը, քաղաքական իրավունքներից զրկելով ռուս և օտարերկրացի կալվածատերերին ու կապիտալիստներին, միևնույն ժամանակ բոլոր այդ իրավունքները հաճույքով տալիս է բոլոր արտասահմանցի բանվորներին և գյուղացիներին, յեթե միայն նրանք աշխատանքի նպատակով են ապրում մեր յերկրում։

Այսպիսով, բոլոր օտարերկրացիները, բանվորներն ու գյուղացիները, վորոնք ապրում են ԽՍՀՄ-ում և այստեղ աշխատում են ֆաբրիկաներում և գործարաններում, այլ և գյուղատնտեսու-

թյամբ պարապողները, կարող են օգտվել բոլոր այն քաղաքական իրավունքներով, որով օգտվում են ռուս բանվորներն ու գյուղացիները, — կարող են ընտրել խորհուրդների համար, կարող են և իրենք ընտրվել և խորհրդային ընտրական պաշտոններ ստանձնել։

Առհասարակ, խորհրդային իշխանության համար հավասար են բոլոր այն քաղաքացիները, որոնք ապրում են հանրապետության մեջ և՛ ռուսները, և՛ ուկրայնացիները, և՛ բաշկիրները, և՛ վոտյակները, և՛ յակուտները։ Այս ժողովուրդներից ոչ մեկը մյուսից ավելի իրավունք չունի և նրանցից ոչ մեկը չի կարող սահմանափակվել իրավունքներով, նամանավանդ, ճնշվել ուրիշ ժողովուրդների կողմից, ինչպես այդ նըկատվում է աշխարհի մյուս տեղերում, ուր չկա խորհրդային իշխանություն։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Ի՞նչու խորհրդային իշխանությունը միայն արտասահմանցի աշխատավորներին է քաղաքական իրավունքներ տալիս, իսկ ԽՍՀՄ ապրող արտասահմանցի կապիտալիստներին և առևտրականներին այդ իրավունքները չի տալիս։

ԱՊԱՍՏԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Հիմնական օրենքները տալիս են նաև ապաստանի իրավունք խորհրդային հանրապետություններում բոլոր այն արտասահմանցիներին, վորոնք քաղաքական և կրոնական համոզմունքների պատճառով իրենց յերկրում յենթարկված են յեղել հալածանքի (եջ 21-րդ)։

Իրենց կառավարությունների հալածանքներից խուսափած արտասահմանցի բոլոր հեղափոխականներին խորհրդային իշխանությունը հաճույքով է ընդունում իր մոտ, խորհրդային հանրապետության մեջ, ու, միշտ և հանապազ, ինքն է առաջարկում օտար պետություններին, վորպեսզի այնտեղի հեղափոխականներին, վորոնց հաճախ մահվան պատիժ է սպառնում, փոխանակեն այդ պետությունների քաղաքացիների հետ, վորոնք, իբրև ռազմական գերիներ և այլն, գտնվում են խորհրդային իշխանության տրամադրության տակ։ Շատ անգամ էլ այնպես է պատահում, վոր խորհրդային իշխանությունը խընդրում է խորհրդային յերկիր ուղարկել արտասահմանցի հեղափոխական բանտարկյալներին։

Այսպես են ազատվել բանտից և մեր հանրապետության մեջ ապրում հունգարացի հեղափոխականները, լեհ կոմմունիստները և այլն։

Նրանցից շատերը հեղափոխական գործունեության պատճառով իրենց հայրենիքում դատապարտված են յեղել մահվան պատժի կամ հավիտյան աքսորի, և խորհրդային իշխանությունը նրանց խլել է դահիճների ձեռքից։

Իզուր չէ, վոր բոլոր յերկիրների ճնշված բանվորներն ու գյուղացիներն այդքան սիրում են խորհրդային հանրապետությունը և դեպի այն ձգտում։ Իզուր չի, վոր բուրժուազիան այդքան կատաղաբար է ատում խորհրդային Հանրապետությունը, համաշխարհային հեղափոխության մարտիկների այդ միակ ապաստանը։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Դո՛ւք ՄՈՊՐ-ին անդամ եք, արդյոք։ Ի՞նչ ընկերություն է այդ և ի՞նչ նպատակներ է հետապնդում։

2. Տվեք արտասահմանցի մի քանի կոմունիստների անուններ, վորոնք, իրենց կառավարություններից հալածվելով, մեր յերկրում ապաստան են գտել։

3, Հիշեցեք և պատմեցեք այն բոլորը, ինչ վոր հայտնի յե ձեզ խորհրդային սահմանին մոտիկ գաղանաբար

սպանված լեհ կոմմունիստներ, Բագինսկու և Վեչեորկեվիչի գործի մասին։

V

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ (Խ.Ս.Հ.Մ.)

Նախ քան խորհրդային յերկիրը կառավարելու հարցին անցնելը, անհրաժեշտ ե մի քանի խոսք ել նրա պետական կառուցվածքի մասին ասել։

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ մտել են այն ժողովուրդների պետությունները, ուր բանվորներին և գյուղացիներին հաջողվել ե տապալել բուրժուազիայի իշխանությունը, կարգավորել և պաշտպանել իրենց սեպհական խորհրդային իշխանությունը։

Մեկ հզոր միություն կազմելու դաշնագիրը ե կնքված հետևյալ վեց դաշնակից հանրապետությունների միջև, վորոնք հիմնված են Ռուսաստանի նախկին կայսրության հողերի վրա[1])։

1) Ռ.Խ.Ֆ.Ս.Հ., Ու.Խ.Ս.Հ. և Ուզ.Խ.Ս.Հ. մեջ մտնում են նաև ինքնավար (այսինքն՝ ինքնուրույն) հանրապետություններ և մարզեր։ Խ.Ս.Հ. Միության բոլոր ազգային հանրապետությունների և մարզերի ցանկն ամփոփված ե այս գրքույկի վերջում։

1. Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ[1]) Սոցիալիստական Հանրապետություն (ՌԽՖՍՀ)։

2) Ուկրայնայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն (ՈւԽՍՀ)։

3. Բելոռուսիայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն (ԲԽՍՀ)։

4. Անդրկովկասյան Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն (ԱԽՖՍՀ)։

5. Ուզբեկստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն (ՈւզԽՍՀ)։

6. Թուրքմենստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն (Թուրք. ԽՍՀ)։

Իսկ ինչն է ստիպել զանազան ժողովուրդների խորհրդային հանրապետություններին ձգտել՝ մտնելու խորհրդային մեկ միության մեջ։

Ահա գլխավոր պատճառները.—

---

1) «Ֆեդերատիվ» նշանակում է—միացյալ։ Օրինակ, Ռուսաստանի Ֆեդերատիվ Հանրապետության մեջ միացած են—Գերմանական, Կարելի, Թաթարստանի և այլ հանրապետությունները. Անդրկովկասյան Ֆեդերատիվ Հանրապետության մեջ միացած են—Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունները։

Առաջինը, ամբողջ աշխարհի բանվորների և գյուղացիների աշխատանքի միանման շահերն են ստիպել զանազան ժողովուրդների խորհրդային հանրապետություններին՝ միանալ սոցիալիստական մեկ կուռ ընտանիքի մեջ։ Այս ընտանիքի մեջ խորթ զավակներ չկան, և իշխանությունը հավասար կերպով պատկանում է բոլոր բանվորներին և գյուղացիներին, ինչ լեզվով էլ ուզում է նրանք խոսեն։

Յերկրորդը, Խորհրդային սոցիալիստական Հանրապետություններից ամեն մեկն առանձին վերցրած, ինչ ժամանակ էլ ասեք, կարող էր յենթարկվել կապիտալիստական պետությունների հարձակման։ Ուստի սոցիալիստական բոլոր հանրապետություններին անհրաժեշտ էր միանալ, միասնական մի ընդհանուր ճակատ կազմել ընդհանուր թշնամու—կապիտալիստների և կալվածատերերի դեմ և ստեղծել քաղաքական, ռազմական, և տնտեսական գործերի մի ընդհանուր վարչություն։

Յերրորդը, մեկ միության մեջ համախմբված խորհրդային հանրապետությունները միայն կարողացան ստեղծել մի մեծ ու կուռ պետություն և միջազգային հզոր ույժ տալ նրան։ Այս ույժը կազդի միջազգային գործերի վրա և դրանց կփոխի աշխատավորների օգտին։

Վերջապես, չորրորդը, խորհրդային առանձին հանրապետությունները չէյին կարող իրենց ուժերով վերականգնել պատերազմից ավերված ժողովրդական տնտեսությունները։ Այս գործը միայն խորհրդային պետությունների Միության բանն է։ Բացի այդ, Նոր տնտեսական քաղաքականությունը պետական կապիտալին և պետական առևտրին զուգընթաց ստեղծել է նաև մասնավոր կապիտալ և մասնավոր առևտուր։ Ուրեմն, ստեղծվել է տնտեսական ներքին ճակատ։ Որպեսզի այս ճակատում մասնավոր կապիտալը և առևտուրն առաջ չընկնեն, հարկավոր էր բոլոր հանրապետությունների տնտեսությունը վարելու գործը կատարելապես միացնել։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Ձեր քաղաքը, ֆաբրիկան կամ գյուղը դաշնակից վո՞ր հանրապետության մեջ է գտնվում։ Յեթե դո՞ւք ինքնավար հանրապետության մեջ կամ մարզում (область) եք ապրում, ցույց տվեք, թե ինչպես է կոչվում այն, յերբ է հիմնված, դաշնակից հանրապետություններից վո՞րի մեջ է մտնում, ինչ ժողովուրդ է բնակվում այնտեղ և ին-

չովեզրագվում, վորն է ձեր հանրապետության կամ մարզի կենտրոնը (գլխավոր քաղաքը)։

2. Գրեցեք, թե ինչ շահ է ստացել ձեր հանրապետությունը՝ Խ. Ս. Հ. Միության մեջ մտնելով։

3. Ուշի-ուշով աչքի անցկացրեք գրքույկիս վերջում կցված՝ Խ. Ս. Հ. Միության հանրապետությունների և մարզերի ցանկը։ Նկատեցեք միության առանձին հանրապետությունների մեջ մտնող ինքնավար հանրապետությունների և մարզերի դասավորման սխեման (հատակագիծը-գծով միացված շրջանագծերը)։

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ԴԱՇՆԱԳՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Միության մեջ մտնելուց հետո, ամեն մի հանրապետություն պահպանում է իր անկախությունը և իր պետական իշխանությունը։ Նմանապես, վորոշված են և առանձին հանրապետությունների սահմանները միության ներսում. առանց շահագրգռված հանրապետության համաձայնության, այդ սահմանները չեն կարող փոփոխվել։ Բացի այդ, ամեն մի հանրապետու-

թյուն, ցանկացած ժամանակին, կարող է դուրս գալ Միությունից։

Բայց դրա փոխարեն, առանձին հանրապետությունների իրավասությունից վերացվել և ԽՍՀՄ-ի իրավասության են անցել արտաքին գործերը, ռազմական և ծովային գործը, արտաքին և ներքին առևտուրը, տրանսպորտը (յերկաթուղին, ջրային ճանապարհները) և փոստ-հեռագրական գործը։

Բացի այդ, միութենական նույն վարչության մեջ են միացել առանձին հանրապետությունների՝ ֆինանսական, ժողովրդական տնտեսության, բանվորա-գյուղացիական տեսչության և աշխատանքի գործերը։

Այստեղ մենք կթվենք մի քանի կարևոր գործեր, վոր բացառապես Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունն է վարում.

1. Խ. Ս. Հ. Միության անունից ոտար պետությունների հետ հարաբերությունների մեջ մանելը և բանակցություններ վարելը, նրանց հետ քաղաքական, առևտրական և այլ պայմանագրեր կնքելը։

2. Ուրիշ պետությունների և Միության միջև սահմանների փոփոխություններ կատարելը,

ինչպես և սահմանների փոփոխություն կատարելը դաշնակից հանրապետությունների միջև իսկ.

3. Խ. Ս. Հ. Մ-ի մեջ նոր հանրապետությունների ընդունելությունը։

4. Պատերազմ հայտարարելը և հաշտություն կնքելը։

5. Արտաքին և ներքին փոխառություններ կնքելը։

6. Միության արտաքին և ներքին առևտրի ղեկավարությունը և ժողովրդական ամբողջ տնտեսության ընդհանուր ծրագրի մշակումը։

7. Տրանսպորտի և փոստ հեռագրական գործի ղեկավարությունը։

8. Միության ամբողջ զինված ուժերի ղեկավարությունը.

9. Խ. Ս. Հ. Միության պետական յեկամուտների և ծախսերի միասնական յելևմտացույց հաստատելը (այս յելևմտացույցի կազմի մեջ մտնում են և՛ դաշնակից հանրապետությունների յելևմտացույցները). Համամիութենական հարկեր և յեկամուտներ սահմանելը, այլ և դաշնակից հանրապետությունների բյուջեների համար այդ հարկերից և յեկամուտներից մասնատրումներ հանելը և նրանց վրա հավելումներ անելը։

10. Ընդհանուր դրամներ, չափեր և կշիռներ սահմանելը։

11. Ամբողջ միության համար հողաշինարարության և հողօգտագործման, ինչպես և ընդերքի, հարստությունների, անտառների և ջրերի օգտագործման միանման կանոններ սահմանելը. մեկ հանրապետությունից մյուսը տեղափոխվելու (բնակության համար) Համամիութենական օրենքներ սահմանելը։

12. Միանման դատաստանական հիմնարկներ ստեղծելը և Համամիութենական քաղաքացիական և քրեական օրենսգրքերի, այլև աշխատանքի հիմնական օրենսգրքի հրատարակությունը։

13. Ժողովրդական լուսավորության և ժողովրդական առողջապահության ընդհանուր ըսկզբունքներ և միջոցներ սահմանելը։

14. Վողջ Միության վրա ամնիստիա տարածելու հայտարարությունը։

15. Խ. Ս. Հ. Մ. հիմնական օրենքները խախտող՝ դաշնակից հանրապետությունների խորհուրդների համագումարների և կենտրոնական գործադիր կոմիտեների վորոշումները բեկանելը։

16. Դաշնակից հանրապետությունների մեջ ծագելիք բոլոր հնարավոր վեճերի լուծումը։

Խ. Ս. Հ. Մ. ստեղծված որից դաշնակից առանձին հանրապետությունների քաղաքացիները, ինչ ազգի յել նրանք

պատկանելիս լինեն, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության քաղաքացիներ դարձան։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Ու. Խ. Ս. Հ. կամ Ռ. Խ. Ֆ. Ս. Հ., կամ դաշնակից հանրապետություններից վորևե մի ուրիշը կարո՞ղ ե, արդյոք, ինքնուրույն կերպով պատերազմ հայտարարել մի օտար պետության (օրինակ՝ Լեհաստանին), նրա հետ առևտրական դաշն կապել, փոխառություն կնքել և այլն։ Յեթե չի կարող—ապա ինչո՞ւ։

2. Խ.Ս.Հ.Միություն հիմնելուց հետո հողային գործերի կառավարչությունն առանձին հանրապետությունների իրավասությանն ե թողնված։ Շնորհիվ այս բանի առանձին հանրապետությունը չե՞ կարող, արդյոք, իր մեջ հողի ազատ առուծախ թույլատրել։

VI

Խ. Ս. Հ. Մ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ. Խ. Ս. Հ. Մ. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետու-

թյունների Միության պետական կառուցվածքի հետ մենք ծանոթացանք։

Այժմ տեսնենք, թե ինչպես է կառուցված խորհրդային իշխանությունը վերից մինչև վար, քաղաքից մինչև գյուղ։

Հին Ռուսաստանում բարձրագույն իշխանությունը մեկ մարդու—թագավորին էր պատկանում։

Ինքը՝ թագավորը, իհարկե, բոլորը կառավարել չէր կարողանում, և այդ բոլորն իր մինիստրների խորհրդի միջոցով էր անում։

Խորհրդային հանրապետությունների Միության մեջ, ինչպես մենք արդեն գիտենք, իշխանությունը ոչ թե մի մարդու, ոչ թե թագավորին է պատկանում, այլ բոլոր բանվորներին և գյուղացիներին է պատկանում։ Այս պատճառով էլ, Միության հանրապետությունները կոչվում են «բանվորագյուղացական», և բանվորների, գյուղացիների ու կարմիր բանակայինների պատգամավորների խորհուրդներն են կառավարում այս հանրապետությունները։

Իսկ թագավորի փոխարեն ո՞վ է այժմ հանդիսանում խորհրդային հանրապետությունների բարձրագույն իշխանությունը։

Խորհրդային Սոցիալիստական Հան-

րապետությունների Միության մեջ գերագույն իշխանությունը Միության խորհուրդների համագումարին է պատկանում։

Ընտրովի մի հիմնարկություն է այդ։ Բաղկացած է քաղաքային խորհուրդների ներկայացուցիչներից (մեկական պատգամավոր ամեն մի 25 հազար քաղաքային ընտրողներից – բանվորներից և կարմիր բանակայիններից), ինչպես և խորհուրդների նահանգական համագումարների ներկայացուցիչներից(նահանգի ամեն մեկ 125,000 բնակչից 1 պատգամավոր)։

Այն հանրապետություններում, ուր նահանգներ չկան, պատգամավորներն այդ հանրապետությունների խորհուրդների համագումարում են ընտրվում։

Խ. Ս. Հ. Մ. խորհուրդների համագումարին է պատկանում ամբողջ իշխանությունը։ Միությունը վոչնչով սահմանափակված չի՛, միանգամայն ինքնուրույն է, վոչ վոքից կախում չունի և ինչ վորոշումներ ուզի, կարող է անել։ Մի խոսքով, խորհուրդների համագումարից բարձր արդեն վոչ մի իշխանություն գոյություն չունի, և, ընդհակառակը, գոյություն ունեցող բոլոր իշխանությունները յենթակա յեն և հաշիվ են տալիս նրան։

Բայց Խ. Ս. Հ. Միության խորհուրդների համագումարը — մեծածավալ մի հիմնարկ է և շարունակ Մոսկվայում գումարվել ու հանրապետությունների Միությունը կառավարել չի կարող։ Լիուլի բավական է, որ նա տարեկան մի անգամ գումարվի պետական ներքական գործերի ամենակարևոր հարցերը լուծելու համար։ Մեզ մոտ իրականում այդպես էլ կառուցված է։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Պատմեցեք այն բոլորը, ինչ որ Համամիութենական խորհուրդների վերջին համագումարի մասին ձեզ հայտնի յե։ Յերբ և որտեղ են տեղի ունեցել նրա նիստերը։ Այդ համագումարում ինչ կարևոր հարցեր են լուծվել և նրանց վերաբերմամբ ինչ որոշումներ են հանված։

Խ. Ս. Հ. Մ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵ

Խ. Ս. Հ. Մ-ի խորհուրդների ներքական համագումարը տարին մի անգամ է հավաքվում (սովորաբար Նոր տարու մոտերքը)։ Իսկ յերբ հարկավոր է լինում պետական ինչ որ առանձին կարևոր գործեր վճռել, խորհուրդների արտակարգ համագումար է հրավիրվում։

Մնացած բոլոր ժամանակ, այսինքն՝ համագումարների միջև յեղած դադարների ժամանակ, հանրապետության բարձրագույն իշխանությունը հանդիսանում ե Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն (Խ. Ս. Հ. Միության Կենտգործկոմ)։

Այդ ժամանակամիջոցում Կենտգործկոմն ամեն բանում փոխարինում ե համագումարին և համամիութենական նշանակություն ունեցող բոլոր հարցերը կարող ե վճռել այնպես, ինչպես ինքը՝ համագումարն ե վճռում։ Նախորդ գլխում մենք այդ հարցերն արդեն թվել ենք։ Մի խոսքով, Խ. Ս. Հ. Միության կենտգործկոմը հանդիսանում ե բարձրագույն օրենսդիրը, կարգադրիչը և վերահսկիչը։

Կենտգործկոմը հրավիրում ե Միության խորհուրդների համագումարը, հսկում ե Միության և առանձին հանրապետությունների կառավարությունների աշխատանքների վրա, միավորում ե Միության օրենսդրությունը և կառավարչությունը, քննության ե առնում և հաստատում Միությանը վերաբերող դեկրետների նախագծերը, և վերջապես, ինքը սեփական դեկ-

րետներ, օրենսգրքեր, վորոշումներ և կարգադրություններ ե հրատարակում։

Բայց Միության կենտգործկոմն իր գործունեյության համար պատասխանատու յե Խ. Ս. Հ. Միության խորհուրդների համագումարի առաջ և պարտավոր ե իր աշխատանքների, ինչպես և ընդհանուր քաղաքականության և առանձին հարցերի վերաբերմամբ հաշիվ և զեկուցումներ տալ նրան։

Խ. Ս. Հ. Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն (Կենտգործկոմ) բաղկացած ե յերկու պալատից. 1) Միության Խորհրդից, վոր ընտրվում ե խորհուրդների համագումարի կողմից և 2) Ազգային Խորհրդից (այսինքն՝ ժողովուրդների խորհրդից), վորի մեջ մտնում են 5-ական ներկայացուցիչ դաշնակից և ինքնավար ամեն մի սոցիալիստական հանրապետությունից և 1-ական ներկայացուցիչ ամեն մի ինքնավար մարզից։ Ազգային Խորհրդի կազմը հաստատվում ե Միության խորհրդների համագումարի կողմից։

Խ. Ս. Հ. Միության կենտգործկոմը տարեկան 3 անգամ հերթական նստաշրջանի յե հրավիրվում և այդ ժամանակ օրենսգրքեր, վորոշումներ և կարգադրություններ ե հրատարակում

ինչպես և Խ. Ս. Հ. Միության օրենսդրական և վարչական ամբողջ աշխատանքն է միավորում։

Ամեն մի օրենք իր ույժը միայն այն ժամանակ կարող է ստանալ, յերբ յերկու պալատն էլ, այսինքն՝ թե Միության Խորհուրդը և թե Ազգային Խորհուրդն ընդունել են այն։ Յեթե նրանց մեջ տարաձայնություն է տեղի ունենում, հարցը հանձնվում է հաշտարար հանձնաժողովին։ Յեթե հանձնաժողովում էլ համաձայնության չեն գալիս, Միութենական Խորհրդի և Ազգային Խորհրդի միացյալ նիստ է գումարվում։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Սովորական ժամանակ, յերբ վոչ Խ. Ս. Հ. Մ. խորհուրդների համագումարներ են տեղի ունենում, վոչ էլ ԽՍՀՄ կենտգործկոմի նստաշրջաններ, Խորհրդային Միության գերագույն իշխանությունը հանդիսանում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միութան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունը, բաղկացած 27 անդամից։

Նախագահությունն ամեն բանում փոխարինում է Խ. Ս. Հ. Մ-ի կենտգործկոմին, գործում է նրա անունից և կազմվում է Միութենական

խորհուրդների կենտգործկոմի նախագահությունից (9 անդամ), այնուհետև, Ազգային խորհրդի նախագահությունից (9 անդամ) և, վերջապես, նախագահության միացած 9 անդամը ընտրվում են Միութենական խորհրդի և Ազգային խորհրդի միացյալ նիստում։

Ըստ Խ. Ս. Հ. Մ-ի մեջ մտնող դաշնակից վեց հանրապետությունների թվի, նախագահությունը վեց նախագահ ունի, որոնք հերթով կատարում են իրենց պարտականությունները։ Ներկայումս Խ. Ս. Հ. Մ-ի կենտգործկոմի նախագահները հետևյալ ընկերներն են. Մ. Ի. Կալինին (ՌԽՖՍՀ), Գ. Ի. Պետրովսկի (Ու. Խ. Ս. Հ.), Ա. Գ. Չերվյակով (Բ. Խ. Ս. Հ.) Հ. Մուսաբեկով (ԱԽՖՍՀ), Ն. Այթակով (Թուրք. Խ. Ս. Հ.) և Ֆ. Խոջայեվ (Ուզ. Խ. Ս. Հ.)։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Վերցրե՛ք ձեր գրադարանից «Известия ЦИК» թերթի համարներից մի քանիսը, գտե՛ք «ԽՍՀՄ-ի կառավարության գործեր և կարգադրություններ» բաժինը, ջոկեցե՛ք այդ բաժնում տեղած՝ «ԽՍՀՄ-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների

Խորհրդի վորոշումներից» մի քանիսը և տեսեք, թե ովքեր են ստորագրել այդ որենքները։

2. Հրատարակվելիք որենքներ քննության առնելու գործում Խորհրդային Միության բանվորներն ու գյուղացիները վորևէ մասնակցություն ունե՞ն, արդյոք։ Դուք ինքներդ կամ ձեր գյուղի ռանչպարները մասնակցություն ունեցել եք, արդյոք, որենքների վորևէ նախագիծ (որենսդրական յենթադրություններ) քննության առնելու գործում։

3. Գրեցեք մի փոքրիկ զեկուցում՝ «Խորհրդային Միության մեջ ինչ որենքներ են հրատարակվում» թեմայի շուրջը։

VII

ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋ ՅԵՎ ՀԻՄԱ

Մեծ յերկրի գործեր կառավարելը բարդ և դժվարին աշխատանք է։ Շատ են այդ գործերը և բոլորն էլ՝ բազմազան։

Վորպեսզի պետություն կառավարելը հեշտ և հարմար լինի, բոլոր միանման գործերը միացվում են մի գերատեսչության կամ վարչության մեջ, որինակ, ռազմական գործերի վարչություն, արտաքին գործերի վարչություն, ներ-

քին գործերի վարչություն և այլն։ Բոլոր այս վարչությունները միասին վերցրած՝ կազմում են պետության կառավարությունը։

Ցարական Ռուսաստանում պետական բոլոր գործերը մինիստրների խորհուրդն էր կառավարում, ըստ վորում, կառավարելու միանման գործերը մի մինիստրության մեջ եյին միանում և նրա վրա առանձին մինիստր եր կարգվում։ Ինչպես մինիստրների խորհուրդը, այնպես էլ մինիստրներին՝ թագավորն եր նշանակում, վորի առաջ և պատասխանատու եյին իրենց կառավարչության համար։

Ամեն մի թագավոր—իր նմանն եր փընտռում. ամեն մեկն իր ճաշակն ու քմահաճույքները, իր սիրելիներն ու մտերիմներն ուներ։ Ուստի, վորպեսզի մինիստրներն իրենց տեղերում յերկար ու պինդ մնային, պետք եր վոչ այնքան իրենց գերատեսչությունը կառավարել իմանային, վորքան թագավորի զանազան քմահաճույքներին, զավակներին, տանու ծառաներին (ձեռը վոտին) և զանազան սիրելիներին հաճոյանալ կարողանային։

Այս բանն, ի հարկե, այնքան էլ օգուտ չուներ։ Բոլորն էլ հիշում են, թե ինչպես Նիկոլայ II իր թագավորության վերջին տարիներում, կնոջ և նրա բարեկամ—անառակ տպառավ (քո-

պակ)» Ռասպուտինի հաճույքի համար, մինիստրներ էր փոփոխում: Իսկ արբեցող Ռասպուտինը դեռ պարծենում էլ էր՝ «յես հարյուր մինիստր եմ նշանակում»:

Այսպես էր ցարական Ռուսաստանում: Հիմա այն չի:

Բանվորա-գյուղացիական մեր կառավարությունը—Ժողովրդական կոմիսարների խորհուրդը վոչ թե առանձին անձնավորությունների հրամանով ե նշանակվում, այլ նշանակվում ե Հանրապետության բարձրագույն իշխանության—Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական գործադիր կոմիտեյի ընտրությամբ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍՍԱՐՆԵՐԸ

Խ. Ս. Հ. Միության գործերի ամբողջ կառավարչությունը բաժանվում ե հետևյալ առանձին գերատեսչությունների, վորոնք ժողովրդական կոմիսարներ են կոչվում.—1) Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատ, 2) Ռազմական և ծովային գործերի ժողովրդական կոմիսարիատ, 3) Արտաքին և ներքին առևտրի ժողովրդական կոմիսարիատ,

4) Ճանապարհների Հաղորդակցության ժողովրդական կոմիսարիատ, 5) Փոստ-Հեռագրական ժողովրդական կոմիսարիատ, 6) Բանվորա-գյուղացիական տեսչության ժողովրդական կոմիսարիատ, 7) Ժողովրդական տնտեսության գերագույն խորհուրդ, 8) Աշխատանքի ժողովրդական կոմիսսարիատ և 9) Ֆինանսական ժողովրդական կոմիսարիատ։

Առաջին հինգ կոմիսարիատները համամիութենական են և դաշնակից հանրապետությունների մեջ իրենց ներկայացուցիչներն ունեն։ Վերջին 4 կոմիսարիատները՝ միացնում են իրենց համանուն՝ դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմիսարիատների գործունեությունը։

Ամեն մի կոմիսարիատի գլուխ ընտրովի ժողովրդական կոմիսսար է կանգնած (առաջ մինիստր էյին ասում)։ Իր վողջ գործունեության համար նա ամբողջովին պատասխատու յե ժողովրդական կոմիսարների խորհրդի առաջ, վորին ինքն անդամ է, ապա՝ նաև Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և նրա նախագահության առաջ։

Ամեն մի ժողովրդական կոմիսարին կից

գոյություն ունի ժողովրդական կոմիսարիատի կոլլեգիա, կոմիսարի նախագահությամբ: Կոլլեգիայի անդամները նշանակվում են Խ. Ս. Հ. Միության ժողովրդական կոմիսարների խորհըրդի կողմից:

Ժողովրդական կոմիսարն իր գերատեսչության մեջ կարող է ամեն մի գործ մենակ, իր իրավունքով վճռել և այդ մասին միայն հայտնել ի գիտություն կոլլեգիայի: Յեթե ամբողջ կոլլեգիան կամ թեկուզ նրա անդամներից մեկը անբավական մնան իրենց ժողովրդական կոմիսարի վորևե վճռից, նրանք այդ վճռի դեմ կարող են բեկման բողոք ներկայացնել ժողովրդական կոմիսարների խորհրդին:

Այսպիսով, բանվորա-գյուղացիական իշխանությունը շարունակ հսկում է իր ամեն մի ժողովրդական կոմիսարի աշխատանքի վրա: Ուստի, ժողովրդական կոմիսարի ամեն մի սխալ վորոշում կարող է արագ և վճռականապես ուղղվել, կասեցվել կամ նույնիսկ բոլորովին բեկանվել:

Ի միջի այլոց, բանվորա-գյուղացիական իշխանությունը ժողովրդական կոմիսարներ ընտրելու մեջ շատ զգույշ է: Ժողովրդական կոմիսարներն ընտրվում են բանվորա գյուղացիական իշխանության, հին, փորձված մարտիկներից, բանվորներից՝ իրենցից և՝ գյուղացիներից կամ

սրանց մասին՝ փորձված և իրենց գործը հասկացող մարդկանցից։

ԱՌԱՆՁԻՆ ԺՈՂԿՈՄԱՏՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Փոքրիկ գրքույկով ամեն մի ժողովրդական կոմիսարիատի աշխատանքը նկարագրելն անհնարին է։ Չափազանց շատ տեղ կբռներ այդ։ Այստեղ մենք համառոտ կերպով կպատմենք միայն Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի և Ռազմական ու ծովային գործերի կոմիսարիատների մասին։

Բոլորին էլ հայտնի յե, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո բոլոր խոշոր ֆաբրիկաներն ու գործարանները կապիտալիստների ձեռքից խլվեցին և բանվորա-գյուղացիական պետության սեփականություն դարձան։ Այսպիսով, պետական ամբողջ արդյունաբերությունը կառավարելու նոր գերատեսչության կարիք ստեղծվեց։ Հիմնվեց այդպիսի մի գերատեսչություն, հանձինս Ժողովրդական Տնտեսության Գերագույն խորհրդի (համառոտ — Գերժողտնտխորհ են ասում)։

Ժողովրդական Տնտեսության Գերագույն խորհուրդը կառավարում է մեր պետության բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները, կազմակերպում է նրանց և, ընդհանրապես, մի-

ջոցներ է ձեռք առնում, վորպեսզի մեր արդյունաբերությունը շուտ վերականգնի, ֆաբրիկաները և գործարանները, վորքան կարելի յե, ապրանք շատ պատրաստեն և ավելի ու ավելի լավացնեն իրենց արտադրությունը։ Բացի այդ, Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհուրդն արդյունաբերությանը հում նյութ, վառելանյութ և դրամական անհրաժեշտ միջոցներ է տրամադրում։ Մի խոսքով, Խորհրդային Միության վողջ արդյունահանությունն ու արդյունագործությունը Խ. Ս. Հ. Մ. Գերժողտնխորհի ղեկավարության տակ է գտնվում։

Գերժողտնխորհը չափազանց կարևոր մի գերատեսչություն է, և նրա աշխատանքից է կախված մեր հանրապետության ապագան։ Վորքան լավ հաջողվի կարգավորել քաղաքի արդյունաբերությունը և վերականգնել գյուղատնտեսությունը, այնքան ավելի ամուր կերպով վոտքի կկանգնի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը։

Նույնպիսի կարևոր նշանակություն ել ունի և Ռազմական ու Ծովային գործերի ժողովրդական կոմիսարիատը։ Ամենքն են հասկանում, վոր Կարմիր Բանակն ու Նավատորմիղը խելացիորեն կառավարելը մեզ հավատարիմ պաշտպանություն է տալիս՝ բանվոր-

ների և գյուղացիների թշնամիների հարձակումից։

Ռազմական և ծովային գործերի ժողովրդական կոմիսարիատին կից գոյություն ունի առանձին կոլլեգիա — Խ. Ս. Հ. Միության ռազմահեղափոխական խորհուրդ։ Խորհրդային ռազմական շինարարության օրգանն է այդ։ Ռազմահեղափոխական խորհուրդը պաշտպանում է Խ.Ս.Հ. Միության սահմանները՝ բանվորների և գյուղացիների թշնամիների հարձակումներից։ Ռազմական բոլոր հիմնարկությունները անմիջականորեն ենթակա են Ռազմահեղափոխական խորհրդին։

Խ. Ս. Հ. Միության բոլոր ռազմական ուժերն ու միջոցները նրա տրամադրության տակ են գտնվում։

Ռազմա-հեղափոխական խորհրդին կից գտնվում են. 1) Պետքաղվարչությունը (Հանրապետության Ռազմա-հեղափոխական խորհրդի քաղաքական վարչություն. 2) Համամիութենական գլխավոր շտաբը. 3) Ռազմա-կրթական հիմնարկների գլխավոր վարչությունը. 4) Կարմիր բանակի գլխավոր շտաբի ճեմարանը. 6) Կարմիր բանակի մատակարարման կենտրոնական վարչությունը։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Ժողովրդական կոմիսարիատներին կից կոլլեգիաներն ինչ նպատակի համար են։

2. Ասացեք, թե Համամիութենական ժողովրդական կոմիսարներից ո՞վ է առաջներում բատրակ յեղել, իսկ հետո՝ քաղաքի բանվոր դարձել։ Գրեցեք նրա համառոտ կենսագրությունը (կյանքի նկարագրությունը)։

3. Մանրամասն գրեցեք, թե ԽՍՀ. Միության 9 կոմիսարիատներից ամեն մեկն ինչ գործեր է վարում։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ժողովրդական կոմիսարները կառավարչության առանձին ճյուղերի գլուխ են կանգնած։ Բացի այդ, նրանք բոլորը Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի անդամ են, վորը մեր Հանրապետության գործերի ընդհանուր կառավարչությունն է տանում։

Խ. Ս. Հ. Մ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը (Ժողկոմխորհը) կառավարում է ամբողջ Միությունը, հսկում է առանձին ժողո-

վրդական Կոմիսարների գործունեության վրա, դեկրետներ (օրենքներ), կարգադրություններ, հրահանգներ է հրատարակում և առհասարակ, ձեռք է առնում ամեն տեսակի միջոցներ, վոր անհրաժեշտ է գտնում պետական կյանքի ճիշտ և արագ ընթացքի համար։

Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը նշանակվում է Միության Կենտրոնական Գործադիր կոմիտեյի կողմից, բաղկացած՝ Նախագահից, փոխ-Նախագահից և վերոհիշյալ 9 ժողովրդական կոմիսարներից։

Յերկիրը կառավարելու իր գործունեության համար Միության Ժողկոմխորհը պատասխանատու յե Միության Կենտգործկոմի և սրա Նախագահության առաջ։

Յեթե Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն այնուամենայնիվ վորևե սխալ վճիռ կամ վորոշում է կայացնում, Միության Կենտգործկոմը և սրա Նախագահությունն իրավունք ունեն կասեցնելու այդ վորոշումը և նույն իսկ բոլորովին բեկանելու։

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի գլուխ է կանգնած ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահը—Խորհրդային կառավարության գլուխը։

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահը Խորհրդային իշխանության առաջին օրից և անփոփոխ մինչև իր մահվան օրը - համայն աշխարհի բանվորների և գյուղացիների առաջնորդ, բոլշևիկների (կոմունիստների) կուսակցության հիմնադիր՝ Վլադիմիր Իլյիչ Լենինն էր։

Ընկ. Լենինի մահից հետո այդ բարձր և պատասխանատու պաշտոնի մեջ նրան փոխարինեց հին բոլշևիկ, Լենինի աշակերտ և հավատարիմ հետևորդ Ալեքսեյ Իվանովիչ Ռիկովը։

Խ. Ս. Հ. Մ.-ի Ժողկոմխորհին կից գոյություն ունի Աշխատանքի Պաշտպանության Միասնական Խորհուրդ (ԱՊԽ)՝ վողջ Միության համար։ Այս խորհուրդը ստեղծված է Խ.Ս.Հ Մ.-ի տնտեսության վերականգնման և պաշտպանության հետ կապ ունեցող հարցերի հաջող և արագ լուծման համար։ Աշխատանքի պաշտպանության խորհուրդը ղեկավարում է Միության վողջ տնտեսության քաղաքականությունը և իրավունք ունի բոլոր հիմնարկների և բոլոր քաղաքացիների համար պարտադիր՝ ինքնուրույն վորոշումներ հրատարակելու։ Դաշնակից հանրապետությունների մեջ Աշխատանքի պաշտպանության խորհրդին համապատասխանում են այսպես ասած Տնտեսական խոր-

հըրդակցությունները (Տնտխորհ), վորոնց գործունեությունը Խ. Ս. Հ. Մ-ի ԱՊԽ-ն է ղեկավարում։

Միության տնտեսության միասնական ծրագիր մշակելու համար ԱՊԽ-ն իրեն կից համապետական պլանային հանձնաժողով (պետպլան) ունի։

ԳԼԽԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Ի՞նչ տարբերություն կա վորևե բուրժուական յերկրի մինիստրների Խորհրդի և ժողովրդական կոմիսարների խորհրդի միջև։

2. Ո՞վ կարող է փոխել ԽՍՀՄ-ի Սահմանադրությունը։ Ժողովրդական կոմիսարների Խորհուրդը կարո՞ղ է արդյոք փոխել այն։

3. Ճիշտ ցույց տվեք, թե ինչ տարբերություն կա ԳԺՏԽ և ԱՊԽ-ի միջև։

Խ. Ս. Հ. ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության վերոհիշյալ պետական հիմնարկներից զատ, յերկու հիմնարկ էլ գոյու-

թյուն ունեն, վորոնց մասին անհրաժեշտ ե յերկու խոսքով ասել։ Միության Կենտգործկոմին կից՝ Միության Գերագույն դատարանն ե այդ և Միության Ժողկոմխորհին կից՝ Պետական Քաղաքական Միացյալ վարչությունը։

Գերագույն դատարանը հսկում ե, վոր դաշնակից բոլոր հանրապետություններում օրենքները միակերպ կիրարկվեն և կարիք յեղած դեպքում՝ անհրաժեշտ բացատրություններ ե տալիս։ Բացի այդ, գերագույն դատարանը լուծում ե դաշնակից հանրապետությունների միջև յեղած դատական վեճերը և քննության ե առնում պաշտոնազանցությունների մեջ մեղադրըվող՝ միության բարձրաստիճան պաշտոնյաների գործերը։

Պետական Քաղաքական Միացյալ վարչությունը (Պետքաղվարչություն) իր իրավասության տակ ե կենտրոնացնում խորհրդային առանձին հանրապետությունների պայքարն՝ ընդդեմ քաղաքական և տնտեսական ասպարեզներում յեղած հակահեղափոխականների, լրտեսների և բանդիտների։ Դաշնակից Հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարներին կից գոյություն ունեն Պետական Քաղաքական Միացյալ վարչության լիազորներ, վորոնց մի-

ջոցով վարչությունը ղեկավարում և ընթացք է տալիս տեղական քաղաքական վարչությունների աշխատանքներին։

Պետական Քաղաքական Միացյալ վարչության նախագահը Խ. Ս. Հ. Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի մեջ է մտնում՝ խորհրդակցական ձայնի իրավունքով։

Վորպեսզի Միացյալ պետքաղվարչության աշխատանքներն օրենքի շրջանակից դուրս չգան, նրա գործունեության վրա հսկում է Խ. Ս. Հ. Միության գերագույն դատարանի դատախազը։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Կարդացեք «կորչի անգրագիտությունը» հրատարակչության՝ «Ժողովրդական դատարան» գրքույկի առաջին յերկու գլուխը (եջ 4 9) և պարզեցեք, թե ինչպես է կառուցված խորհրդային դատարանը։

2, Ո՞ւր կարելի յե բողոքել ժողովրդական դատարանի վճռի դեմ և ո՞ւր պետք է բողոքարկել նահանգական դատարանի վճիռը։

3. Ի՞նչ բան է Պետքաղվարչությունը, առաջ ինչպես եր կոչվում և ինչ

արժեքներ ունի մեր յերկրի առաջ։ Վորոնք են պետքաղվարչության հիմնական անելիքները։

4. Գրեցեք, թե Պետքաղվարչության և Ռազմահեղափոխական Խորհրդի անելիքների և աշխատանքների մեջ ինչո՞վ եք դուք նմանություն տեսնում։

VIII

ՌԽՖՍՀ ՅԵՎ ԴԱՇՆԱԿԻՑ ՄՅՈՒՍ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Մենք տեսանք, թե Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության (Խ. Ս. Հ. Մ.) մեջ ինչպես է կառուցված բարձրագույն իշխանությունն, ինչպես է հիմնվում Միության կառավարությունը և նրա մեջ ինչ բարձրագույն հիմնարկներ են գործում։

Հիմա տեսնենք, թե ինչպես է կառուցված պետական իշխանությունը Ռուսաստանի Ֆեդերատիվ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՌԽՖՍՀ) և դաշնակից մյուս հանրապետությունների՝ Ուկրայնայի, Բելոռուսիայի, Անդրկովկասի, Թուրքմենստանի և Ուզբեկստանի ներսում։

Մտնելով Խ. Ս. Հ. Միության մեջ, բոլոր այս հանրապետությունները առաջվա պես անկախ և ինքնուրույն մնացին։ Նրանցից միայն պետական գործերի 5 ճյուղ ամբողջովին անցավ Միության իրավասությանը—արտաքին և ռազմական գործերը, արտաքին առևտուրը, ճանապարհների հաղորդակցության և փոստ-հեռագրական գործը։

Մնացած բաներում ամեն ինչ առաջվա կարգին մնաց. դաշնակից ամեն մի հանրապետության մեջ իր ինքնուրույն պետական իշխանությունն է (իր խորհուրդների համագումարները, կենտրոնական գործադիր կոմիտեները, նախագահությունները ու ժողկոմխորհները, իր ժողովրդական կոմիսարիատներն են)։

Բոլոր այդ հանրապետություններում պետական իշխանությունը բոլորովին միանման է կառուցված, մի քանի աննշան տարբերություններով միայն։ Ուստի մենք այդ հանրապետություններից միայն մեկի վրա—Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության (ՌՍՖԽՀ) վրա կանգ կառնենք։ Դաշնակից հանրապետություններից ամենամեծը և ամենաուժեղն է այդ և ըստ ժամանակի՝ բոլոր մյուս հանրապետություններից առաջ է հիմնվել։

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

ՌԽՖՍՀ-ում գերագույն իշխանությունը Խորհուրդների Համառուսական Համագումարին է պատկանում։ Համագումարը բաղկացած է քաղաքային ներկայացուցիչներից (1-ական պատգամավոր ամեն մի 25 հազար քաղաքային ընտրողից—բանվորներից և կարմիր բանակայիններից) ինչպես և խորհուրդների նահանգական համագումարների ներկայացուցիչներից (1 ական պատգամավոր նահանգի ամեն մի 25 000 բանվորից)։

Խորհուրդների Համառուսական Համագումարին, այսինքն՝ բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների ընտրյալներին է պատկանում ՌԽՖՍՀ ամբողջ իշխանությունը։ Այս իշխանությունից բարձր ուրիշ ոչ մի իշխանություն գոյություն չունի, և ՌԽՖՍՀ մյուս բոլոր իշխանությունները Խորհուրդների Համառուսական Համագումարին են հաշվետու։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Տվեք ձեր նահանգի (մարզի) այն գյուղացիներից մի քանիսի անունը,

ազգանունը և բնակավայրի անունը, վորոնք ընտրված են յեղել Հանրապետության խորհուրդների վերջին Համագումարի համար։

2. Ձեր նահանգը (մարզը) Հանրապետության Խորհուրդների համագումարին քանի պատգամավոր է ուղարկում։ Նրանց մեջ գյուղացիները շատ եյին արդյոք։

3. Հանրապետության Խորհուրդների Համագումարի պարապմունքների և վորոշումների մասին արած ձեր գյուղացի—պատգամավորների զեկուցմանը դուք ներկա յեղե՞լ եք, արդյոք։ Հաղորդեցեք այդ զեկուցման համառոտ բովանդակությունը։

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵ

Վորովհետև Խորհուրդների Համառուսական Համագումարները տարեկան մի անգամ են միայն հավաքվում և այն էլ կարճ ժամանակով, ուստի մնացած ամբողջ ժամանակ ՌԽՖՍՀ բարձրագույն իշխանությունը Խորհուրդների Համառուսական կենտրոնական գործադիր կոմիտեն (կենտգործկոմը) է

հանդիսանում, որը Խորհուրդների Համառուսական Համագումարի կողմից է ընտրվում։

Կենտգործկոմը Խորհուրդների Համառուսական Համագումար է հրավիրում, ամբողջ յերկրում հսկում է կառավարության աշխատանքների վրա, Խորհուրդների Համառուսական Համագումարի վորոշումների և կենտրոնական իշխանության կարգադրությունների կատարման վրա. քննություն է առնում և հաստատում դեկրետների նախագծեր. վերջապես ինքը ևս սեփական դեկրետներ և կարգադրություններ է հրատարակում։ Կենտգործկոմին է պատկանում նույնպես՝ ՌԽՖՍՀ դատաստանական և վարչական հիմնարկների կողմից դատապարտված՝ քաղաքացիներին ներում շնորհելու և ազատելու կարևոր իրավունքը։

Կետգործկոմն իր գործունեյության համար պատասխանատու յե Խորհուրդների Համառուսական Համագումարի առաջ և պարտավոր է հաշիվ տալ նրան, ինչպես և զեկուցել ընդհանուր քաղաքականության և առանձին հարցերի մասին։

Խորհուրդների Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեն (Կենտգործկոմը) Մոսկվայում շարունակ նիստ չի ունենում։ Տարեկան 3 անգամից վոչ պակաս նա այստեղ հեր-

թական կարճատև նստաշրջանների (նիստի) եյ հավաքվում։ Մնացած ամբողջ ժամանակ Համառուս. Կենտգործկոմին իր նախագահությունն է փոխարինում, վորը շարունակ Մոսկվայում է գտնվում։

Հ. Կենտգործկոմի նստաշրջանների միջև յեղած դադարների ժամանակ ՌԽՖՍՀ բարձրագույն իշխանությունը Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունն է հանդիսանում։ Նախագահությունն այդ ժամանակ իրավունք ունի հաստատելու, բեկանելու և կասեցնելու ՌԽՖՍՀ կառավարության — Ժողովրդական Կոմիսարների խորհրդի վորոշումները։

Հ. Կենտգործկոմի նախագահությունն իր գործունեյության համար պատասխանատու յե իրեն ընտրող՝ Խորհուրդների Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի առաջ։

Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահն է՝ Միխայիլ Իվանովիչ Կալինինը. Տվերի նահանգի, Կարչևի գավառի, Յակովլեվսկի գավառակի ինքնուս գյուղացին։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Գրեցեք Մ. Ի. Կալինինի համառոտ կենսագրությունը։

2. Ցերբ և վորտեղ ե գումարվել Հ. կենտգործկոմի վերջին նստաշրջանը։ Ի՞նչ հարցեր են քննության առնվել այդ նստաշրջանում։

Այդ հարցերը քննության առնվել են, արդյոք, ձեր գյուղում։ Գյուղացիներն ինչպես եյին վերաբերվում նստաշրջանի վորոշումներին։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ ՑԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐ

ՌԽՖՍՀ գործերի ընդհանուր կառավարչությունը—Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի (Ժողկոմխորհի) ձեռքում ե գտնվում։ Ժողկոմխորհը հսկում ե առանձին Ժողովրդական Կոմիսարների գործունեյության վրա, դեկրետներ (օրենքներ), կարգադրություններ, հրահանգներ ե հրատարակում և առհասարակ ամեն տեսակի միջոցներ ե ձեռք առնում պետական կյանքի կանոնավոր ընթացքի համար։

Իր այն վորոշումներն ու վճիռները, վորոնք պետական առանձին կարևոր նշանակություն ունեն, Ժողկոմխորհն առաջ պետք ե ներկայացնի Հ. Կենտգործկոմ՝ ի քննություն և ի հաստատություն։

Նման հարցերի վերաբերմամբ օրենքները

Հ. Կենտգործկոմի և Ժողկոմխորհի անունից միասին՝ հայտարարվում են թերթերում։

Ընդհանրապես, բանվորագյուղացիական կառավարության ամբողջ գործունեությունը — Խորհուրդների Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի մշտական հսկողության տակ է գտնվում։

ՌԽՖՍՀ. Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը բաղկացած է՝ իր Նախագահից, փոխնախագահներից և 11 Ժողովրդական Կոմիսարներից.

1. Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի նախագահից, 2. Հողագործության Ժողովրդական Կոմիսարից, 3. Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարից, 4. Աշխատանքի Ժողովրդական կոմիսարից, 5. Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարից, 6. Արդարադատության Ժողովրդական Կոմիսարից, 7. Բանվորագյուղացիական Տեսչության Ժողովրդական Կոմիսարից, 8. Լուսավորության Ժողովրդական Կոմիսարից, 9. Առողջապահության Ժողովրդական Կոմիսարից, 10. Սոցիալական Ապահովագրության Ժողովրդական Կոմիսարից և 11. Ներքին Առևտրի Ժողովրդական Կոմիսարից.

Մինչև ԽՍՀՄիության կազմելը, ՌԽՖՍՀ Ժողկոմխորհի մեջ մտնում էյին նաև Արտաքին գործերի, ռազմական և ծովային գործերի, Արտաքին առևտրի, հաղորդակցության ճանապարհների և փոստ-հեռագրական ժողովրդական կոմիսարները։ Բայց Ռուսաստանում ներկայումըս այդ կոմիսարների պաշտոնները գոյություն չունեն արդեն։ Նրանց տեղ ՌԽՍՖՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին մասնակցում են Ծ. Ս. Հ. Միության արտաքին գործերի, Ռազմական և Ծովային գործերի, Արտաքին առևտրի, հաղորդագցության ճանապարհների և փոստ հեռագրական Ժողովրդական Կոմիսարների լիազորները։

Բացի այդ, պետք է ի նկատի ունենալ, վոր Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհուրդը, ինչպես և Ֆինանսների, Աշխատանքի, Ներքին առևտրի և Բանվորա-գյուղացական Տեսչության Ժողովրդական Կոմիսարներն այժմ կատարելապես ինքնուրույն չեն։ ՌԽՖՍՀ Ժողովրդական այդ Կոմիսարները միավորված են ԽՍՀՄիության համանուն Ժողովրդական Կոմիսարիատների հետ և իրենց գործունեյության ասպարեզում պարտավոր են կատարել ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների առաջադրությունները։ Միևնույն ժամանակ, նրանք յենթակա

յեն նաև Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին և ՌՍՖՍՀ Ժողկոմխորհին։

Մյուս կողմից, 1. Արտաքին գործերի, 2. Արդարադատության, 3. Հողագործության, 4. Լուսավորության, 5. Առողջապահության, 6. Սոցիալական Ապահովագրության Ժողովրդական Կոմիսարիատները միայն Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին և ՌՍՖՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին են ենթակա։ Ինքնավար-ինքնուրույն ժողկոմատներ են դրանք։

ՌՍՖՍՀ Ժողովրդական Կոմիսարիատների կառուցվածքը և Ժողովրդական Կոմիսարների պարտականությունները նույնն են, ինչ որ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Ժողովրդական Կոմիսարներինը։

Փոքր ինչ կանգ առնենք միայն Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի վրա, որովհետև նրա աշխատանքը գյուղի համար խոշոր նշանակություն ունի։

Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատը նպատակ ունի զարգացնելու և ամրապնդելու յերկրի գյուղատնտեսության բոլոր ճյուղերը և բարելավելու գյուղացիների հողային վիճակը։ Հողագործության Ժողկոմատը կա-

ռավարում է ՌԽՖՍՀ հողային և անտառային ստացվածքը, նկատի յե առնում և կյանքի մեջ կիրարկում բանվորա գյուղացիական իշխանության բոլոր միջոցները՝ գյուղական և անտառային տնտեսության ասպարեզում։

Այս նպատակներն իրականացնելու համար հիմնված են՝ Հողժողկոմատի ապարատներ՝ կենտրոնում, նահանգական և գավառային հողային վարչություններ (հողբաժիններ) — տեղերում, փորձակայաններ, ազնվացեղ անասունների (племенный) և խորհրդային տնտեսություններ գյուղատնտեսական (агрономический) հողամասեր, կայաններ և այլն։

Հողժողկոմատի կենտրոնական ապարատը, ըստ գործերի տեսակի, բաժանվում է 5 վարչության 1. վարչական-ֆինանսական, 2. գյուղատնտեսական վարչություն, 3. անտառային վարչություն, 4. անասնաբուժական վարչություն և 5. հողաշինարարական, հողի բարելավման (մելիորացիա) և պետական հողային գույքերի վարչություն։

Բոլոր այս վարչությունները ղեկավարում են տեղական հողային մարմինների աշխատանքը, վորոնց կից գոյություն ունեն գյուղացիական տնտեսության մի ամբողջ շարք մասնագետներ — գյուղատնտեսներ, կենդանագետներ

(ЗООТЕХНИК), անասնաբուժներ, հողաշինարարներ և այլն։

Հողժողկոմատը լայն կերպով իր կենտրոնական վարչություններում աշխատանքի մեջ է քաշում առաջ քաշված գյուղացիներին (ВЫДВИЖЕНЦЫ), վորոնք յերբեմն ամենապատասխանատու պաշտոններ են վարում։ Օրինակ, գյուղացի Իգվիկովն այժմ հողային գործերի բարձրագույն դատարանի—հողային վեճերի բարձրագույն կոնտրոլի կոլլեգիայի (Հողժողկոմատին կից) և այլն նախագահն է։

ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բացի դաշնակից վեց հանրապետություններից, մեր պետության մեջ կան նաև ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր։

Ինքնավար հանրապետություններ և մարզեր նրա համար են բաժանված, վորպեսզի կուլտուրական տեսակետից նրանք կարողանան ինքնուրույն կերպով զարգանալ և հայտնաբերել իրենց ազգային ստեղծագործական ուժերը և առանձնահատկությունները։ ԽՍՀՄ..ում, մանավանդ ծայրամասերում բնակվող առագձին ազգությունները ցարիզմի որով խիստ ճնշված եյին և իրենց զարգացմամբ յետ են մնացել ռուս

ժողովրդից։ Առանց ազգային ինքնավարության (ինքնուրույնության) նրանք չէին կարող արագ հասնել առաջ գնացած կենտրոնական Ռուսաստանին։ Ուստի մեր կուսակցության դեռ X-րդ համագումարը նպատակ էր դրել օգնելու հետամնաց ժողովուրդների աշխատավոր մասսաներին։

«1. Իրենց մեջ զարգացնելու և ամրապընդելու խորհրդային պետականությունը՝ համաձայն այդ ժողովուրդների ազգային-կենցաղական պայմանների։

«2. Զարգացնելու և ամրապնդելու իրենց մեջ՝ տեղական մարդկանցից կազմած, տեղական ժողովրդի կենցաղին ծանոթ, մայրենի լեզվով գործող՝ դատարանը, ադմինիստրացիան, տնտեսական օրգանները, պետական օրգանները։

«3. Մայրենի լեզվով զարգացնելու իրենց մեջ՝ մամուլը, դպրոցը, թատրոնը, ակմբային գործը և, առհասարակ, կուլտուր-լուսավորչական հիմնարկները»։

Ինքնավար հանրապետություններում պետական իշխանությունը ճիշտ այնպես է կառուցված, ինչպես և դաշնակից հանրապետություններում։ Նրանցից ամեն մեկի գլուխ կանգնած է խորհուրդների՝ իրենց համագումա-

րը, իրենց Կենտրոնական Գործադիր կոմիտեն (Կենտգործկոմ), իրենց Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը (Ժողկոմխորհ) և իրենց 11 ժողովրդական կոմիսարները։

Ինչ վերաբերում է ինքնավար մարզերին, այնտեղ չկան վոչ Կենտգործկոմ, վոչ Ժողմոմխորհ, վոչ ել առանձին Ժողովրդական Կոմիսարներ։ Այնտեղ իշխանությունը կառուցված է նահանգական ձևով, Խորհուրդների Մարզային համագումար, Մարզային Գործադիր կոմիտե (Մարզգործկոմ) և այլն։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Ինքնավար և դաշնակից հանրապետություններում ո՞վ է հանդիսանում բարձրագույն իշխանությունը։ Ցո՛ւյց տվեք, թե ի՛նչ իրավունքներ են տրված այդ իշխանությանը։ Ո՞ւմ ձեռքումն է գտնվում Խորհրդային Միության գերագույն իշխանությունը։

3. Կարո՞ղ են, արդյոք, ձեր գյուղացիներն ազդել վորևե կարևոր և օգտավետ որենք հրատարակելու վրա։ Ի՞նչ կերպ նրանք կարող են այդ անել։

3. Թվեցեք ձեր դրացի ինքնավար հանրապետության ժողովրդական կոմիսարների խորհրդի կազմը։ Ցույց տվեք ՌՍՖՍՀ և ԽՍՀՄ.

ժողովրդական կոմիսարների կազմը։ Համեմատեցեք բոլոր յերեք ցուցակները, բացատրեցեք, թե ինչ նմանություն կա նրանց մեջ և տարբերությունն ինչ է։

IX

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵՐՈՒՄ

Ցարական Ռուսաստանը, ինչպես գիտենք, բաժանվում էր նահանգների, գավառների ու գավառակների։ Խորհրդային իշխանությունն առաջվա այդ բաժանումն աստիճանաբար փոխում է, այսպես ասած, տեղը տնտեսական շրջանացում՝ մարզեր, ապա՝ վիճակներ և վերջապես՝ շրջաններ է հաստատում։

Այս բանը նրա համար է արվում, վորպեսզի տնտեսության միատեսակ վայրերը գտնվեն և միասնական մի ամբողջության մեջ միավորվեն։ Այս ձևով ավելի հարմար է ժողովրդական տնտեսությունը կարգավորել, զարգացնել և կառավարել[1])։

[1]) Այսպես, օրինակ, յենթադրվում է հետևյալ մարզերի բաժանել՝ ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասը. Հյուսիս-Արևմտյան, Հյուսիս-Արևելյան, Արևմտյան, Կենտրոնական, Վյատկա-Վետլուգայի, Ուրալի, Հարավ-Արևմտյան, Կենտրոնական-սևահող, Միջ-Վոլգյան, Հարավ-Արևելյան, Հարավային լեռնարդյունաբերական մարզ, Կովկաս։

Այնտեղ, ուր արդեն անց է կացված այսպիսի շրջանացում, մի քանի նահանգների տեղ ստեղծվում է վիճակների և շրջանների բաժանվող՝ տնտեսական միանման մարզ (կամ երկիր)։ Այսպես են, օրինակ, ՌԽՖՍՀ.-ը, Ուրալի մարզը, Հյուսիսային Կովկասը, Սիբիրը և մոտ ժամանակներս գոյացած Հեռավոր-Արևելքի երկիրը։ Այստեղ արդեն ոչ նահանգներ գոյություն ունեն, ոչ գավառներ, ոչ էլ գավառակներ, և մարզն ուղղակի բաժանվում է վիճակների, իսկ վիճակները՝ շրջանների...։ Նույնըն էլ Ուկրայնայի ԽՍՀ.-ումն է. այնտեղ այժմ 41 վիճակ և 636 շրջան կան։

Հարց է ծագում. հապա ի՞նչպես է կառուցված խորհրդային իշխանությունը տեղերում— մարզերում, վիճակներում և շրջաններում, կամ թե՝ նահանգներում, գավառներում և գավառակներում (այնտեղ, ուր սրանք դեռ մնում են)։ Ի՞նչպես են կազմակերպվում այստեղ խորհուրդները, ումնից են բաղկացած, և երկիրը կառավարելու համար ի՞նչ հարցեր լուծելու լիազորություն ունեն։

Խորհրդային իշխանության կազմակերպությունը տեղերում չափազանց պարզ է. վերևում —Խորհուրդների համագումարն է և սրան փոխարինող՝ Գործադիր Կոմիտեն, կամ թե՝

կարճ ասած—գործկոմը, ներքևում խորհուրդը (քաղաքային և գյուղական)։ Իշխանության այդ կառուցվածքն ամենուրեք միևնույնն է, ինչպես յերկրումն է (մարզում), այնպես էլ վիճակումն է (նահանգ, գավառ), այնպես է, վերջապես նաև շրջանում (գավառակում)։

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Ամեն մի յերկրի և մարզի համար բարձրագույն իշխանությունն խորհուրդների յերկրային կամ մարզային համագումարն է հանդիսանում։ Ընդ վորում, խորհուրդների յերկրային և մարզային համագումարները կազմվում են հետևյալ ներկայացուցիչներից. 1. քաղաքների և գյուղաքաղաքների խորհուրդներից («քաղխորհուրդներից»), այլ և քաղաքներից դուրս գտնվող՝ ֆաբրիկաների և գործարանների խորհուրդներից և 2. խորհուրդների վիճակային համագումարներից։ Այդ ներկայացուցիչները համագումարին հետևյալ հաշվով են ուղարկվում. քաղխորհուրդներից—ամեն մի 5000 ընտրողից 1-ական պատգամավոր, իսկ վիճակային խորհուրդներից—բանվորական ամեն մի 25 հազար մարդուց՝ 1-ական պատգամավոր։

Խորհուրդների նահանգական համագումարներն էլի նույն կարգով կազմվում են հետևյալ

հաշվով. 1-ական պատգամավոր ամեն մի 2000 քաղաքային ընտրողից և խորհուրդների գավառային համագումարից — 1-ական պատգամավոր բնակչության ամեն մի 10 հազար մարդուց։

Խորհուրդների վիճակային համագումարները կազմվում են քաղաքային և գյուղական խորհուրդներից, հետևյալ հաշվով. քաղխորհուրդներից — 1-ական պատգամավոր ամեն մի 1000 ընտրողից և խորհուրդների շրջանային համագումարներից — 1-ական պատգամավոր բնակչության ամեն մի 5000 մարդուց։

Խորհուրդների գավառային համագումարներին քաղխորհուրդների և գյուղխորհուրդների ներկայացուցիչները հավաքվում են հետևյալ հաշվով. քաղխորհուրդներից 1-ական պատգամավոր ամեն մի 200 ընտրողից և խորհուրդների գավառակային համագումարից — 1-ական պատգամավոր բնակչության ամեն մի 1000 մարդուց (բայց ամբողջ գավառի համար 300 պատգամավորից ոչ ավելի)։

Եվ, վերջապես, շրջանային կամ գավառակային համագումարները կազմվում են շրջանի կամ գավառակի տերիտորիայի վրա գտնվող բոլոր խորհուրդների ներկայացուցիչներից, հետևյալ հաշվով — 1-ական պատգամավոր բնակչության ամեն մի 300 մարդուց (բայց շրջանի կամ գավառակի համար 150 պատգամավորից ոչ ավելի)։

Խորհուրդների համագումարն իր գավառակում, շրջանում, գավառում վիճակում, նահանգում մարզում և յերկրում բարձրագույն իշխանությունն է հանդիսանում։ Համագումարը, սովորաբար, տարեկան մեկ անգամ է հավաքվում («հերթական համագումարներ»)։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Շրջանացված է, արդյոք, այն յերկիրը, ուր դուք եք ապրում։ Յեթե շրջանացված է, ապա տնտեսական ինչ նշաններով է շրջանացված։ Վորքա՞ն և ինչ բնակչություն ունի (քա՞ղաքի, գյուղի), ինչ վիճակների յե բաժանվում (թվեցե՛ք այդ վիճակները, ցո՛ւյց տվեք բնակիչների թիվը, և կազմը), ձեր վիճակում ի՞նչ քաղաքներ և քաղաքի բնակիչներ, ֆաբրիկաներ, գործարաններ կան, նրանց թիվը և այլն։

Յեթե շրջանացում տեղի չի ունեցել նույն տեղեկությունները տվե՛ք նահանգի և գավառի վերաբերմամբ։

2. Մի կտոր թղթի վրա գծեցե՛ք

խորհրդային իշխանության կառուցվածքը, սկսած գյուղխորհրդից՝ մինչև Խորհրդների Համամիութենական Համագումարը։

ԳՈՐԾԿՈՄՆԵՐ

Իսկ ո՞վ է հանդիսանում մարզի, վիճակի, շրջանի (նահանգի, գավառի, գավառակի) իշխանությունն այն ժամանակ, յերբ մարզային, վիճակային (նահանգական, գավառային) կամ շըրջանային (գավառակային) համագումար գոյություն չունի։ Ախր ամեն մի համագումար հավաքվում, զանազան հարցերի վերաբերմամբ վորոշումներ է կայացնում, իսկ հետո պատգամավորները վերադառնում են իրենց տեղերը։ Համագումարների միջև յեղած դադարների ժամանակ ո՞վ է կառավարում։

Իշխանությունը տեղերում կառուցված է այնպես, ինչպես և կենտրոնում։ Կենտրոնի պես տեղերում էլ՝ մշտական կառավարելու համար իրենց կենտրոնական կոմիտեն են ընտրում. մարզի կամ յերկրի համար— խորհուրդների մարզային յերկրային գործադիր կոմիտե (մարզգործկոմ, յերկրգործկոմ), վիճակի, նահանգի համար վիճգործկոմ (նահգործկոմ), գավառի համար գավգործկոմ, շրջանի հա-

մար—շրջգործկոմ և, վերջապես, գավառակի համար—գավառակային գործկոմ։ Այս գործկոմներից ամեն մեկը, խորհուրդների համագումարների միջև յեղած դադարների ժամանակ, իր շրջանի բարձրագույն իշխանությունն է հանդիսանում։

Ամեն մի գործադիր կոմիտե ամբողջապես պատասխանատու յե իրեն ընտրող խորհուրդների համագումարի առաջ։ Համագումար հրավիրելով, գործադիր կոմիտեն իր ամբողջ գործունեյության համար նրան հաշիվ է տալիս։

Անկախ դրանից, տեղական ամեն մի գործկոմ յենթակա յե վերադաս գործադիր կոմիտեյին,—անխտիր, մինչև իր դաշնակից հանրապետության կենտրոնական գործադիր կոմիտեն։

Այդ պատճառով, գործկոմների սխալ վորոշումները կարող են բեկանվել վոչ միայն իրենց ընտրող խորհուրդների համագումարների կողմից, այլև վերադաս գործկոմների, ինչպես և դաշնակից տվյալ հանրապետության կենտրոնական գործադիր կոմիտեյի և ժողովրդական կոմիսարների խորհրդի կողմից։

Արդ, մենք տեսնում ենք, վոր տեղերում խորհրդային իշխանության կառուցվածքի մեջ պատշաճ կարգ է պաշտպանվում։ Տեղերում խոր-

հըրդային իշխանության ամենաառաջին բջիջը հանդիսացողը—քաղաքային խորհուրդը և գյուղական խորհուրդն են։ Երկրորդ աստիճանը (գյուղական վայրերի համար—քաղաքներն անջատված են)—հանդիսանում է շրջանային կամ գավառակային համագումարը, ուր գյուղխորհուրդներն իրենց պատգամավորներն են ուղարկում։ Երրորդ աստիճանը—խորհուրդների վիճակային կամ գավառային համագումարը և, վերջապես, չորրորդ աստիճանը—խորհուրդների մարզային (նահանգական) համագումարներն են։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Վիճգործկոմը (Նահգործկոմը) սխալ վորոշում է հրատարկել։ Ո՞ւր պետք դիմել՝ այդ վորոշումը բեկանելու համար։ Ո՞վ կարող է բեկանել այն։

2. Վիճգործկոմի հաշվետու զեկուցման վերաբերմամբ խորհուրդների՝ ձեր վիճակի համագումարն ի՞նչ վորոշում է կայացրել։

3. Ո՞վքերն են վիճգործկոմի Նախագահության մեջ (անունը, զբաղմունքը, կուսակցականությունը)։

4. Գործկոմի համար կարելի՞ չե, արդյոք, անկուսակցականի ընտրել։ Նման ընտրություններն ի՞նչ դեպքեր են ձեզ հայտնի։

ԻՆՉ ԳՈՐԾԵՐ Ե ՎԱՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵՐՈՒՄ

Օրենքն ասում ե (հոդ. 49), որ «իր իշխանության սահմաններում խորհուրդների համագումարը (մարզային, նահանգական, գավառային, գավառակային) տվյալ տերրիտորիայի բարձրագույն իշխանությունն ե»։

Սակայն, այդ ամենևին չի նշանակում, որ «ամբողջ իշխանությունը տեղերում» միանգամայն պատկանում ե խորհուրդների համագումարներին և թե որևե գավառակ կամ գավառ կարող են բոլորովին կտրվել թե նահանգական, թե կենտրոնական իշխանությունից ու բոլոր գործերն իրենց հասկացողությամբ և իրենց հայեցողությամբ վճռել, «այսինքն թե մենք ել վոչ ոքի չենք ճանաչում, մենք՝ մեզ համար, իսկ Նահանգն ու Մոսկովն ել՝ իրենց համար»։

Իսկապես, խորհրդային իշխանության սկզբում շատերն օրենքն այդպես հակառակն ել հասկանում եյին։ Նրանք համառ պնդում եյին, որ հիմա «ամբողջ իշխանությունը տեղերումն ե», և, օրինակ, ասենք մի ինչ վոր Պոգորելովի գավառակի համար կենտրոնական, նահանգական և գավառական իշխանության կարգադրությունները կարծեք՝ բոլորովին գրած ել չլինեյին։ «Մենք, իբր թե, իսկի յել պարտական չենք կատարելու

այդ վարչումները, և դրանք մեզ համար ձեռնըտու չենք գտնում», մեր որենքը մենք ենք։ Իշխանությունը տեղերումն է, ուստի չենք ուզում կենտրոնի, նահանգի կամ գավառի կարգադրությամբ վոչ հարկ վճարենք, վոչ էլ տուրք»։

Յեթե բոլորն էլ այդպես դատեյին, ապա բանվորների և գյուղացիների մեր ուժեղ, միաձույլ հանրապետությունը շատ շուտով կբաժանվեր անթիվ ու անհամար՝ փոքրիկ, չնչին հանրապետությունների։ Ի հարկե բոլոր այդ հանրապետություններն անզոր կլինեյին, յերկրում վոչ մի կարգ չեր լինի, և կալվածատերերի ու կապիտալիստների զորքը շուտով բոլորին կոտորեր։

Ամեն մի մարդ հասկանում է, վոր բանվորա-գյուղացիական իշխանությունը պետք է սերտ կերպով միաձուլված և կազմակերպված լինի։ Այն պետք է կարողանա իր բազմաթիվ թշնամիներին բոլոր բանվորների և գյուղացիների կուռ ու կոփված և ազդու ույժը հակադրել։

Իսկ դրա համար անհրաժեշտ է, վոր խորհրդային իշխանությունը ըսկսած ամենափոքր գյուղաքաղաքից և վերջացրած կենտրոնով, միասնական լինի, իսկ նրա գործունեյությունը՝ խիստ համաձայնեցված.

Ահա թե ինչու Խորհրդային Սահմանադրությունը տեղերում խորհրդային իշխանության (մարզային, նահանգական, գավառային և գավառակային) ամենառաջին և գլխավոր պարտականություններից մեկը — համապետական խնդիրների կատարումն է համարում, որինակ.—

«Խորհրդային իշխանության պատշաճ բարձրագույն մարմինների վորոշումները կյանքի մեջ կիրարկելը, ինչպես և խորհրդային վողջ գործունեյությունը տվյալ շրջանի կամ վայրի սահմանների մեջ միավորել»։

Այնուհետև. «տվյալ տերրիտորիայի սահմաններում հեղափոխական օրինականությունն ապահովելը և պետական կարգն ու հասարակական ապահովությունը պաշտպանելը»։

Յեվ, վերջապես «համապետական նշանակություն ունեցող հարցերի քննությունը, ինչպես սեփական նախաձեռնությամբ, այնպես ել վերադաս գործադիր կոմիտեների առաջարկով» (ՌԽՖՍՀ Սահմանադրություն, հոդ. 64)։

Ինչ վերաբերում է տեղական գործերին, խորհուրդների պարտականությունների մեջ է մտնում զուտ տեղական նշանակություն ունեցող բոլոր հարցերի լուծումը, ինչպես և լուսավորելու և տվյալ վայրի տնտեսությունը բարձրաց-

նելու համար բոլոր տեսակի միջոցներ ձեռք առնելը։

Այս նպատակով գործկոմներին կից հիմնվում են բաժիններ, վարիչի գլխավորությամբ. (Օրինակ, աշխատանքի բաժին, ժողովրդական լուսավորության բաժին, առողջապահական բաժին և այլն)։

Առանձնապես կարևոր պարտականություններ են ընկնում խորհրդային սովետին իշխանության վրա, այսպես ասած՝ տեղական բյուջեներ անցկացնելու գործում։ Ոչ միայն վողջ նահանգն ամբողջապես վերցրած, այլև ամեն մի գավառակ այժմ պարտավոր է չեկմուտացույց կազմել (չեկամուտների և ծախսերի ցանկը)։

Այս գործը չափազանց պատասխանատու գործ է. պետք է փնտրել տեղական չեկամուտների այնպիսի աղբյուրներ, վորոնք հնարավորություն տան իրենց միջոցով, օրինակ, գավառակային վարչություն, գավառակային դպրոցներ, հիվանդանոցներ և անհրաժեշտ այլ հիմնարկներ պահելու։ Այսպես ծախսերն էլ պետք է համարեցնել չեկամուտների հետ, վորպեսզի գավառակի համար վոչ մի անհրաժեշտ կամ կարևոր բան չկրճատվի և, միաժամանակ այնպես չըլինի, վոր թաղվեն—չեկամուտը ծախսի հետ բաղդատել։

Խորհրդային ընտրյալներն այստեղ շատ պետք է չափ ու ձև անեն, որպեսզի չմնասվեն, դուրս «չգան բյուջեյից», իսկ իրենց տնտեսությունը որքան կարելի յե լավ վարեն։

ՊԱՅՔԱՐ ԲՅՈՒՐՈԿՐԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Կուսակցության և խորհրդային իշխանության հիմնական նպատակն այժմ մեր պետական ապպարատը բարելավելն է։ Հին վարչակարգից՝ կառավարելու չինովնիկական (բյուրոկրատական) սովորություններ են մեզ ժառանգություն մնացել, և մենք մինչև որս այդ սովորությունները դեռ վերջնականապես չենք վերացրել։

Չինովնիկություն, գործերի ձգձգում, «թղթերի» անչափ արտադրություն, փքացրած հաստիքներ (штаты) — այս բոլորը դեռ այժմ էլ են նկատվում։

Իսկ ինչ միջոցներով պետք է կռվել կառավարելու մեր այս բացերի դեմ։ Գլխավոր միջոցը — պրոլետարիատի և գյուղացիության լայն մասսաներին՝ խորհրդային ապպարատը բարելավելու և կառավարելու գործի մեջ քաշելն է։

Վ. Ի. Լենինն ասել է. «ամբողջ առանցքը այն է, որ այժմ անհամեմատ ավելի լայն, զորեղ մասսայով առաջ շարժվենք, ոչ այլ կերպ, քան գյուղա-

ցիության հետ մեկտեղ՝ գործով, պրակտիկայով ու փորձով ցույց տալով նրան, որ մենք սովորում ենք և կսովորենք նրան ոգնել, նրան առաջ տանել»։

Ուրեմն, աշխատավորների լայն շերտերից մեր խորհրդային հիմնարկների նախկին կտրվածությունը փոխարինելու համար պետք է յերեվան գա աշխատավորների ամենամոտիկ մասնակցությունը՝ խորհրդային աշխատանքներին։ Ինչպես ընկ. Կալինինն է ասում, պետք է «գյուղացուն և գեղջկուհուն դուրս քաշել տնային կենցաղի կեղևի միջից և նրանց ընդհանուր պետականության հաղորդակից անել»։

Այս ուղղությամբ մենք նվաճումներ արել ենք արդեն. խորհուրդների վերընտրության մեջ իսկապես մասնակցող գյուղացիների թիվը տարեց-տարի շատանում է. Օրինակ, 1925-1926 թ. թ. վերջին ընտրությունների ժամանակ ՌՍՖՍՀ ում այդ թիվը հասավ գյուղական ընտրողների ամբողջ կազմի 47 տոկոսին։

Սրա հետ մեկտեղ հաջող կերպով անց է կացվում նաև թե կուսակցական և թե անկուսակցական ավելի ոժտված բանվորների և գյուղացիների առաջ քաշումը խորհրդային վարչական ապարատում – անմիջական աշխատանքների մեջ։

Գավառակային, գավառական, նահանգական և նույնիսկ կենտրոնական կառավարչական որգաններում մենք այժմ առաջ քաշված գյուղացիների բազմաթիվ խմբակներ ունենք, վորոնք մշտական և կենդանի կապ են պահպանում իրենց առաջ քաշող գյուղացիների հետ։ Շնորհիվ այդ մարդկանց, խորհրդային որգաններն ել են սերտ կերպով մոտենում գյուղին, նրա կարիքներին ու պահանջներին։

Սրան զուգընթաց, մեր պետությունը, հանձինս առաջ քաշված գյուղացիների, գործունյա և բյուրոկրատությամբ չվարակված՝ խորհրդային թարմ աշխատակիցների մի ամբողջ բանակ ե ձեռք բերում։

Խոշոր նշանակություն ունի նաև հեղափոխական կայուն որինակություն մտցնելը։ Հեղափոխական նվաճումները պաշտպանելու նպատակով սահմանված հանրապետական որենքների խիստ պահպանություն ե անշեղ պահանջվում այժմ խորհրդային կառավարչական մարմիններից։ Որենքների այդ պահպանությունը կոժանդակի խորհրդային իշխանությանը՝ կանոնավորելու հեղափոխական կարգը, ամրացնելու գյուղացիական լայն մասսաների վստահությունը։

Հեղափոխական որինակությունը անողոք

թշնամին է՝ քմահաճույքների, ամեն տեսակ հրամաններ տալու, այցելուներին արհամարհական վերաբերմունք ցույց տալու, գրությունները «գլխից ռադ» անելու և ձգձգումների։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Կազմեցեք ձեր վիճգործկոմի (գավգործկոմի) բոլոր բաժինների ցուցակը և, ըստ հնարավորության, մանրամասն ցույց տվեք, թե ինչ գործ է վարում յուրաքանչյուր բաժինը։

2. Անկուսակցական գյուղացիներին խորհրդային ապարատի պատասխատու աշխատանքների, կոոպերատիվ ու այլ աշխատանքների մեջ քաշելու ինչ դեպքեր են ձեզ հայտնի։ Կապը չե՞ն կտրել, արդյոք, առաջ քաշվածներն իրենց գյուղի հետ, հաշիվ տալի՞ս են, արդյոք, իրենց առաջ քաշող մասսաներին՝ իրենց նոր գործի համար։

3. Ի՞նչ նշանակություն ունին գյուղթղթակիցների աշխատանքները՝ գյուղում հեղափոխական որինականության ամրացնելու համար։

ԳԱՎԱՌԱԿԱՆ ԳՈՐԾԿՈՄՆԵՐ

Բոլոր գործկոմներից գյուղական կյանքին ամենից մոտիկ կանգնած է գավառակային գործադիր կոմիտեն (կամ շրջանային,—կարճ ձևով «շրջգործկոմ»)։

Գավառակային գործկոմների վրա խորհրդային օրենքների կողմից մեծ ու պատասխանատու անելիքներ են դրված. 1) գավառակում գտնվող խորհրդային բոլոր օրգանների և հիմնարկների գործունեությունը ղեկավարելը, նրանց ուղղություն տալը և միավորելը, բացառությամբ համագավառային, համահանգական, կամ համապետական նշանակություն ունեցողներից. 2) խորհրդային իշխանության դեկրետներն ու վորոշումները կյանքի մեջ կիրառելը. 3. գավառակի սահմաններում խորհրդային ընտրությունները ղեկավարելը. 4) հակահեղափոխության դեմ կռվելը և հեղափոխական կարգը, անդորրությունն ու ապահովությունը պահպանելը և 5) գյուղական խորհուրդներ ղեկավարելն ու դրանց վրա հսկելը։

Պարզ է, որ այսպիսի պատասխանատու անելիքների հետ, գավառակային գործկոմին տրված են նաև լայն իրավունքներ։ Գործկոմը ղեկավարում և ուղղություն է տալիս գավառակի միլիցիայի և քրեական հետախույզ բաժնի

գործունեության. իրեն իրավասության տակ գտնվող բոլոր հարցերի վերաբերմամբ պարտադիր վորոշումներ ե հրատարակում և նահանգական ու գավառական իշխանությունների պարտադիր վորոշումները խախտողների վրա վարչական կարգով տուգանքներ ե դնում։

Գավառակային գործկոմը օժտված ե նաև ստացվածքային մեծ իրավունքներով։ Գավառակը — մի ամբողջ մեծ տնտեսություն ե, և գավառակային գործկոմն իրավունք ունի հիմնելու իր ձեռնարկությունները, օրինակ. ոճառի, ձյութահան, աղյուսի և այլ գործարաններ, ջրաղացներ և այլն, ինչպես և հանրային ոգտագործման ձեռնարկություններ, օրինակ, բաղնիք, ջրմուղ, ելեքտրակայան և այլն։

Իբրև խոշոր տեր, գավառակային գործկոմն ունի նաև իր գավառակային բյուջեն (յեկամտի և ծախսերի տարեկան նախահաշիվը)։ Այլ կերպ գավառակը չեր կարող իրագործել իրեն առաջադրած տնտեսական և կուլտուրական նպատակները։

Իսկ այդ ծախսերը մեծ են։ Ախր ուրիշ վոչ վոք այնպես հոգ չի տանում գավառակի խորհրդային հիմնարկները՝ դպրոցները, խրճիթ-ընթերցարաններն ու կուլտուր լուսավորական այլ կազմակերպություններ կառուցելու, նորոգելու

մատակարարելու և պահելու մասին, հիվանդանոցներ, բուժարաններ, անասնաբուժական կայաններ կառուցելու, կամուրջներ ու գյուղական ճանապարհներ շինելու և նորոգելու մասին և այլն. գյուղատնտեսական գործիքներ նորոգելու համար՝ դարբնոցներ և արհեստանոցներ շինելու մասին, ինչպես գործկոմն է հոգ տանում։ Գավառակային գործկոմի աշխատանքներն այնքան են բազմաբարդ, որ ստիպված պետք է լինեյինք նրանց բաժին ընկած աշխատանքները յերկար թվելու։

Հապա գավառակային ծախսերը հոգալու համար գավառակային գործկոմը միջոցներ վորտեղից է ձեռք բերում։ Առաջին հերթին, զանազան տեսակի հարկերն ու տուրքերն են դրանք։ Սրանց մեջ նշանավոր տեղը գյուղատնտեսական հարկի մասնատրություններն են գրավում, այնուհետև—պետական արհեստագործական հավելյալ հարկը՝ առևտրական և արդյունաբերական ձեռնարկություններից. վոգելից խմիչքներ և ծխախոտ վաճառելու իրավունքի հավելյալ հարկերը և շենքերի (ֆաբրիկաների, գործարանների, պահեստների) տեղական հարկերը։ Բացի այդ, գավառակն ինքն էլ կարող է իր վորոշ սեպհական հարկերը դնել (որինակ, իրենց ձիերն ու այլ բաները վարձով տվող գյուղացիների վրա)։

Տնտեսությունը լավ տանելու գավառակը

գյուղի յեկամուտ կարող է ստանալ նաև իրեն պատկանող ստացվածքներից՝ հողերից, ձկնորսություններից, շուկաների հրապարակներից, արդյունաբերական ձեռնարկություններից, դարբնոցներից, վարձակայաններից (прокатный пункт) և բեռնավորման կայաններից։ Ժամանակի ընթացքում այս յեկամուտները, իհարկե, գավառակի բյուջեյի մեջ աչքի ընկնող տեղ կբռնեն։

Գավառակային գործկոմները պետք է ուղեցույց լինեն խորհրդային իշխանության բոլոր ձեռնարկություններին՝ գյուղացիության տնտեսական-կուլտուրական բարձրացման գործի ասպարեզում։ Գործկոմները պետք է աջակցեն գյուղատնտեսական արտադրողականությունը զարգացնելուն և միաժամանակ սոցիալիստական հունով առաջնորդեն այն։ Ուստի գավառակային գործկոմները մեծ ուշադրություն պետք է դարձնեն բնակչության կոոպերացման յենթարկելուն, աջակցեն սպառողական կոոպերացիայի զարգացմանը, գյուղատնտեսական ընկերություններ, արտելներ, կոմունաներ և այլն հիմնելուն։

Գավառակային գործկոմի վրա միաժամանակ պարտականություն է ընկնում միջակին և չքավորին պաշտպանել, որ կուլակները չճորտացնեն նրանց. վճռական պայքար պետք է մղեն ճորտացնող պայմաններ կնքելու դեմ և թույլ չտան այն։

Բոլոր այս դժվարին խնդիրները գործկոմը կարող է կատարել գյուղացիների աջակցությամբ միայն։ Ուստի ամեն մի գավառակային գործկոմ խիստ շահագրգռված է գյուղացիներին և գեղջկուհիներին խորհրդային շինարարության մեջ շուտ քաշելու համար։ Այս բանի լավագույն միջոցը— արհմիությունների, կանանց պատգամավորական ժողովների, գյուղական հասարակական կազմակերպությունների և գավառակի սահմաններում յեղած՝ ֆաբրիկաների, գործարանների և պետական ձեռնարկությունների ներկայացուցիչների մասնակցությամբ գավառակային գործադիր կոմիտեների նստաշրջաններ (նիստեր) կազմակերպելն է։

Բացի այդ, գավառակային գործկոմներին կից հիմնվում են գավառակի կարևոր գործերի մշտական ս ե կ ց ի ա ն ե ր (բաժիններ) և հանձնաժողովներ. հողային, բարեկարգության, կուլտուրլուսավորական և այլն։ Այս սեկցիաներում մասնակցում են բոլոր ակտիվ գյուղացիներն ու գեղջկուհիները, գյուղական ինտելիգենցիան և աշխատավորների մյուս շերտերը։

Այսպիսի սեկցիաներ կրկնակի օգուտ են տալիս. գյուղացիները նրա մեջ կամաց-կամաց ընտելանում են պետական աշխատանքներին, իսկ գավառակային գործկոմը հնարավորություն է ստանում գործերն ավելի ճիշտ վճռելու։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՑԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Ի՞նչպես են կառուցված ձեր գավառակային գործկոմները. ի՞նչ բաժիններ ունին, շա՞տ են, արդյոք, ծառայողները և ո՞վ ե մտնում նախագահության մեջ։

2. Արտագրեցեք գավառակային գործկոմի բյուջեն և ուշի ուշով աչքի անցկացրեք. ճի՞շտ են, արդյոք, բաշխված ծախսերը (նայած գործի կարևորությանը), չկա՞ն, արդյոք, վորևե զանցառություններ, շատ մեծ չե՞, արդյոք, ապարատ պահելու ծախսը։ Աչքի անցկացրեք բյուջեյի յեկամտային մասը և կշռադատեցեք, թե՝ գավառակային գործկոմը յեկամուտների վո՞ր մասը, համաձայն տեղական պայմանների, կարող եր միացնել։ Բաց չե՞ թողնված, արդյոք, ելի վորևե յեկամտի աղբյուր։

3. Մի զեկույց գրեցեք.«ձեր գավառակային գործկոմի նվաճումներն ու պարտականությունները»թեմայի շուրջը։

4. Մի զեկույց գրեցեք. «Ի՞նչ կերպ

կարելի չէ աշխուժացնել և բարելավել մեր գավառական գործկոմի աշխատանքները» թեմայի շուրջը։

X

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՔԱՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Վողջ ԽՍՀՄ-ի խորհրդային իշխանության սարքին բջիջը, հիմքը—բանվորների, գյուղացիների, կազակների և կարմիր բանակայինների պատգամավորների խորհուրդներն են հանդիսանում. քաղաքներում ու գյուղաքաղաքներում—քաղաքային խորհուրդները (կրճատ—քաղխորհուրդներ), իսկ գյուղերում—գյուղական խորհուրդներ (կրճատ՝ գյուղխորհուրդներ)։

Քաղաքային խորհուրդներն ընտրվում են 1 տարի ժամանակով, հետևյալ հաշվով—բնակչության ամեն մի հազար մարդուց մեկ պատգամավոր, բայց ոչ պակաս քան 50 և ոչ ավելի քան 1000 պատգամավոր։

Այն քաղաքներում, ուր կան 50 հազարից ավելի բնակիչ, կարող են ընտրվել նաև թաղային խորհուրդներ, ըստ քաղաքի թաղերի թվի *)։

*) Մոսկվայում, օրինակ, 6 այսպիսի թաղխորհուրդներ կան. Բաումանի, Զամոսկվորեցկի, Կրասնոպրեսնայի, Ռոգոժսկու, Սիմոնովսկի, Սոկոլնիչեսկի և Խամովնիչեսկի։

Մեր պետությունը պրոլետարական պետություն է։ Ուստի քաղաքային խորհուրդները Խ. Ս. Հ. Մ-ում խոշոր նշանակություն ունեն. հենց դրանց մեջ ու դրանց միջոցով են պրոլետարիատի լայն մասսաները սովորում պրոլետարական պետություն կառավարելը։ Այստեղ, ամենօրյա գործնական աշխատանքի մեջ, խորհրդային պետության շինարարների միջա նոր և նոր ջոկատներ— փորձված և գործունյա տերեր են ստեղծվում։

Ուստի քաղխորհրդի հիմնական խնդիրն է - քաղաքի ամբողջ աշխատավոր բնակչությունը միացնել սոցիալիստական շինարարության թե տեղական և թե համապետական կառավարչական ապարիգում մասնակցելու համար։

Այս բանի համար հաճախ (ամիսը մեկ անգամից ոչ պակաս) քաղխորհրդի պլենումներ (ընդհանուր ժողովներ) են կազմակերպվում, ըստ որում, նրանց մեջ կարող են մասնակցել բոլոր բանվորները և նույնիսկ խորհրդի ոչ անդամները, խորհրդակցական ձայնի իրավունքով։

Բանվորների հարմարության համար այդ նիստերը կազմակերպվում են ուղղակի Փաբրիկաներում, գործարաններում, բանվորական թաղամասերում և այլն։ Բայց այդ, ժամանակ առ

ժամանակ կազմակերպվում են ընտրող բանվորների առանձին ժողովներ, և այստեղ պատգամավորներն իրենց գործունեության մասին հաշիվ են տալիս բանվորներին։ Ընդ որում, յեթե պարզվի, որ քաղխորհուրդ ուղարկված պատգամավորները վատ են աշխատել, ընտրողները միշտ էլ իրավունք ունեն նրանց յետ կանչելու քաղխորհրդից և նոր ընտրություններ կատարելու։

Քաղխորհրդի աշխատանքներն աշխուժացնելու համար մեծ նշանակություն ունեն նաև քաղխորհրդի սեկցիներն ու հանձնաժողովները։

Քաղխորհրդի սեկցիաները (բաժինները) կարող են զանազան լինել, բայց, որենքով, քաղխորհրդում անշուշտ պետք է աշխատեն հետևյալ սեկցիաները. Կոմմունալ տնտեսության, Ժողովրդական լուսավորության, Առողջապահական, Ֆինանսա—բյուջեյական և կոոպերատիվ-առևտրական։ Սեկցիաներին ու նրանց հանձնաժողովներին կարող են մասնակցել արհմիությունները, ֆաբրիկա-գործարանային կոմիտեները և, ընդհանրապես, բանվորական ամենալայն մասսաները։

Քաղխորհրդի անդամները, պարտադիր կերպով պետք է մտնեն սեկցիաներից մեկի մեջ (իրենց

հավանությամբ), այնտեղ աշխատեն, և ժամանակ առ ժամանակ զեկուցեն ընտրողներին սեկցիայում իրենց վարած աշխատանքների մասին։

Քաղխորհրդի նախագահության նիստերի ժամանակաշրջանում տվյալ քաղաքի սահմաններում բարձրագույն իշխանությունը քաղխորհրդի նախագահությունն է հանդիսանում, որ բաղկացած է նախագահից և 10 անդամից (շտատից դուրս գտնվող քաղաքներում-ընդամենը յերեք հոգի)։

Քաղաքի ամբողջ տնտեսությունը քաղխորհրդի իրավասության տակ է գտնվում և այս տնտեսությունը վարելու համար քաղխորհուրդներին կից կոմունալ բաժիններ ունի։

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Գյուղխորհուրդները շրջանի կամ գավառակի բոլոր գյուղերում ընտրվում են 1 տարի ժամանակով, հետևյալ հաշվով. բնակչության ամեն մի 100 մարդուց 1-ական պատգամավոր, բայց թվով 3-ից ոչ պակաս և 50-ից ոչ ավելի պատգամավոր՝ ամեն մի գյուղխորհրդից *)։

*) Յեթե գյուղի բնակիչների թիվը 300 հոգուց պակաս է, առանձին գյուղական խորհուրդ չի ընտրվում։ Այսպիսի գյուղը միանում է մոտակա գյուղխորհրդին և նրա ընտրություններին մասնակցում։ Այս-

Գյուղխորհրդի հիմնական նպատակը—վողջ աշխատավոր բնակչությունը տեղական կյանքի սոցիալիստական շինարարության մեջ քաշելն է. գյուղական տնտեսությունը բարձրացնելը, տգիտության, խավարի, հիվանդությունների և գյուղական կյանքի այլ պակասավոր կողմերի դեմ պայքարելը, բանվորագյուղացիական իշխանության օրենքների կիրառումը, գյուղացիներին ու գեղջկուհիներին պետություն կառավարելու գործի մեջ քաշելը։

Գյուղխորհրդի անելիքներն առանձնապես կարևոր են հողային գործում, տնտեսության, առևտրի և բարեկարգության ասպարեզներում։ Ըստ օրենքի, գյուղխորհուրդը պարտավոր է միջոցներ ձեռք առնել բազմացան մտցնելու, մանր արտերը վերացնելու. վարձու կայաններ, բեղմնավորման, հատիկ մաքրելու, անասնաբուժական կայաններ, նորոգման արհեստանոցներ և այլն կազմակերպելու. անտառային և տորֆի հրդեհներ հանգցնելու համար օգնություն կազմա-

---

պխի փոքրիկ գյուղի գործերը կառավարելու համար գյուղխորհրդի առանձին լիազոր է նշանակվում։ Նա իրենց գյուղում կյանքի մեջ կիրառում է գյուղխորհրդի բոլոր կարգադրությունները, նրա հետ մշտական կապ է պահպանում և իր գործունեության համար նրան հաշիվ է տալիս։

կերպելու, ճանապարհները, կամուրջները, պատվարները և այն պատշաճ դրության մեջ պահելու։

Կուլտուր-լուսավորության ասպարեզում գյուղխորհուրդը պարտավոր է հոգ տանել՝ գյուղում դպրոցներն ու նախադպրոցական հիմնարկները զարգացնելու, անգրագիտության դեմ կռվելու, խրճիթ-ընթերցարաններ հիմնելու, գրքեր, թերթեր և հանդեսներ ստանալու և սրանք գյուղացիների մեջ տարածելու համար։

Գյուղխորհուրդը պարտավոր է նաև հոգ տանել աշխատավորների կյանքը, կենցաղը և տնտեսությունը կառուցելու մասին. փողոցների և տների մաքրության, վարակիչ հիվանդությունների դեմ կռվելու, մանկությունը և մայրությունը պահպանելու մասին, գյուղացիական փոխօգնության և կոոպերացիայի բարելավման, արտելներ, կոմմունաներ ու հավաքական տնտեսություններ ստեղծելու մասին։

Չափազանց լուրջ խնդիրներ են դրված գյուղխորհրդի վրա, հեղափոխական օրինականությունը պահպանելու ասպարեզում։ Գյուղխորհուրդը հայտնում և բացատրում է քաղաքացիներին բանվորագյուղացիական կառավարության օրենքները, հսկում է սրանց կա-

տարելու վրա, կռվում է ամեն տեսակի չարագործության և հանցագործության դեմ. կռիվ է մղում գանձարան կողոպտելու, կաշառակերության, վատնումների, ճորտացնող պայմանագրերի և օրենքի այլ խախտումների դեմ։

Հանցնագործություններ հայտնաբերելու դեպքում գյուղխորհուրդն իրավունք ունի հանցագործներին ձերբակալելու, բայց, միաժամանակ, հարկավոր է այս առթիվ հայտնել գավառակային գործկոմին։

Գյուղխորհրդի պարտականությունների այս համառոտ պատմությունից արդեն պարզ է, թե ինչ խոշոր նշանակություն ունի գյուղխորհուրդն ամեն մի գյուղացու կյանքում։ Չկա գյուղական տնտեսության ու կենցաղի մի այնպիսի կողմ, որն օրենքը հանձնարարած չլիներ գյուղխորհրդի ուշադրությանը։

Պարզ է, որ 3-10 մարդուց բաղկացած գյուղխորհրդի անդամների փոքրիկ խմբակը բոլոր այդ խնդիրները չի կարող կատարել միայն իր ուժերով, հրամանով ու ցուցմունքով։ Գյուղական կյանքի ու գյուղական տնտեսության սոցիալիստական վերաշինությունը խոշոր ու բարդ գործ է։ Գյուղացիության չքավոր և միջակ մասսաների հա-

սարակական գործունեյության միջոցով միայն կարող է կատարվել այն։

Ուստի կուսակցությունը և խորհրդային իշխանությունն այժմ հերթի յեն դրել՝ գյուղխորհրդի աշխատանքներն աշխուժացնելու և բոլոր գյուղացիներին ու մանավանդ գեղջկուհիներին այդ աշխատանքների մեջ քաշելու հարցը։

Ի՞ՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՄՈՏԵՆԱԼ ԱՅԴ ՀԱՐՑԻՆ

Ամենից առաջ, գյուղխորհրդի նիստերում, բացի խորհրդի անդամներից, անպատճառ պետք է մասնակցեն գյուղի բոլոր առաջավոր մարդիկ և պաշտոնական անձինք. գյուղացիական փոխօգնության կոմիտեների ներկայացուցիչները, կոոպերացիայի ու հասարակական այլ կազմակերպությունների ներկայացուցիչները. գեղջկուհի-պատգամավորներն ու կին բատրակները, գյուղատնտեսները, բժիշկները, ուսուցիչները և այլք։ Այդ նիստերում պետք է լսվեն և քննության առնվեն կոոպերացիայի ներկայացուցիչների, ուսուցչի, գյուղատնտեսի, բժշկի և այլոց զեկուցումները։

Հետո, ամեն մի գյուղխորհրդին կից՝ սրան օգնելու համար պետք է հիմնվեն առանձին սեկցիաներ (բաժիններ) կամ հանձնաժո-

ղովներ։ Այսպես են, օրինակ, հետևյալ հանձնաժողովները կամ սեկցիաները՝ գյուղատնտեսականը—գյուղի տնտեսության և անասնաբուծության զարգացման բարելավման, կուլտուր-լուսավորականը — կուլտուր-լուսավորական, ինչպես և առողջապահական, վարակիչ հիվանդությունների դեմ կռվելու և այլ հարցերի, առևտրական-կոոպերատիվի, ֆինանսահարկային և այլն։

Հանձնաժողովներում և սեկցիաներում կարող են աշխատել վոչ միայն գյուղխորհրդի անդամները, այլև ընտրելու և խորհուրդների մեջ ընտրվելու իրավունք ունեցող բոլոր քաղաքացիները, գյուղացիները, գեղջկուհիները, բատրակները, կին բատրակները, ուսուցիչները, գյուղատնտեսները և գյուղի հասարակական ու տնտեսական հիմնարկների մյուս աշխատակիցները։

Ել ավելի կարևոր նշանակություն ունի քաղաքացիների ընդհանուր ժողովը կամ հասարակական ժողովը*)։

*) Քաղաքացիների ընդհանուր ժողովները չպետք և շփոթել հողային ընկերությունների ընդհանուր ժողովների կամ հասարակական ժողովների հետ։ Հողային ընկերությունների ժողովներում միայն ընկերությունների անդամներն են մասնակցում։ Այս ժողովները միակ հողօգտագործման և հողաշինարարական հարցեր կարող են վորոշել։

Գյուղխորհուրդները պետք է առնվազն ամիսը մեկ անգամ գյուղական ժողովներ հրավիրեն և փութաջան կերպով պատրաստեն ժողովի մանրամասն օրակարգը։ Այս օրակարգը գյուղական կատարածուների միջոցով հայտնվում է բնակչությանը ոչ ուշ, քան ժողովից յերեք օր առաջ և փակցվում է գյուղի աչքի ընկնող տեղում։

Քաղաքացիների ընդհանուր ժողովներին ներկայումս կարող են մասնակցել ոչ միայն տանտերերը, այլև 18 տարեկանի հասած՝ նրանց ընտանիքի բոլոր անդամներն ու, ընտրելու և խորհուրդների համար ընտրվելու իրավունք ունեցող բոլոր քաղաքացիները։ Այսպիսով, հասարակական ժողովում մասնակցել կարող են, օրինակ, բատրակներն ու կին բատրակները, վորոնք գյուղում ոչ տնտեսություն ունին, ոչ էլ ընտանիք (տուն ու տեղ չունեցողները), կին կազմակերպությունների, կոմյերիտմիության և այլն անդամներն ու ներկայացուցիչները։ Մասնակցել կարող են նաև բոլոր պաշտոնական անձինք. ուսուցիչը, գյուղատնտեսը, հողաչափը, խրճիթվարը, բուժակը, միլիցիոները, դարբինը, փականագործը, հյուսնը, ծառան և այլք։

Ընդհանուր ժողովների իրավունքները մեծ են։ Օրենքով, գյուղխորհուրդը պարտավոր է իր գործունեության համար հաշիվ տալ քաղաքա-

ցիներին և կատարել ընդհանուր ժողովների բոլոր օրինական վորոշումները։ Առհասարակ, գյուղխորհրդի կողմից ընտրողներին արվող այդ հաշվետվությունները պետք է կիրառվեն իբրև պարտադիր կանոն։ Չպետք է մոռանալ, վոր ընտրողները միշտ էլ կարող են յետ կանչել՝ ընդհանուր ժողովի հրահանգները չկատարող իրենց պատգամավորներին և նոր վերընտրություններ կատարել (բացի տարեկանից)։

Քաղաքացիների ընդհանուր ժողովները կարևոր են նաև այն պատճառով, վոր նրանց միջոցով գյուղը շարունակ կապ է պահպանում թե վերադաս խորհուրդների և թե խորհրդային կենտրոնական իշխանության հետ։ Ախր, օրենքով, գյուղխորհուրդը պարտավոր է ամեն մի ընդհանուր ժողովում հայտնել քաղաքացիներին և բացատրել նրանց կառավարության բոլոր օրենքներն ու կարգադրությունները։ Մյուս կողմից, հասարակական ժողովն ինքն էլ կարող է ներկայացնել իշխանության բարձրագույն մարմիններին՝ այս կամ այն օրենքները հրատարակելու անհրաժեշտության մասին՝ իր ցանկությունները։

Գյուղացիության լայն մասսաներին խորհըրդային աշխատանքների մեջ քաշելու մի ուրիշ ճանապարհ ևս պետք է ցույց տալ. ընտրությունների համար ընտրելու իրավունք

ունեցող բոլոր գյուղացիների և գեղջ-կուհիների գլխովին մասնակցելն ե այդ։

Գյուղխորհրդի գլուխ ե կանգնած իր նախագահը, վորին գյուղխորհրդի անդամներն իրենք իրենց միջից են ընտրում։ Գյուղխորհուրդի նիստերը տեղի չեն ունենում վոչ պակաս, քան յերկու շաբաթը մեկ անգամ։ Բոլոր ընթացիկ աշխատանքները գյուղխորհրդի նախագահն ե տանում քարտուղարի հետ միասին. վարում ե ծննդյան և մահվան ակտերի գրանցումները, վավերացնում ե իր գյուղի քաղաքացիների ստորագրությունները, պայմանագրերն ու համաձայնագրերը. վարում ե բնակչության հաշվառումը, նորեկների գրանցումը, խնամակալներ ու հոգաբարձուներ ե ընտրում։

Գյուղական խորհրդի բոլոր այն վորոշումներն ու կարգադրությունները, վորոնք չեն հակասում որենքներին, պարտադիր են տվյալ գյուղում ապրող բոլոր քաղաքացիների համար։ Գյուղական խորհուրդն իրավունք ունի քննելու և մշակելու՝ իր վայրում կյանք և տնտեսություն կառուցելու վերաբերյալ բոլոր հարցերը։ Իր բոլոր վորոշումները գյուղխորհուրդն ինքն իր իրավունքով ել իկատար ե ածում։

Գյուղխորհուրդը հաշվետու յե գավառակա-

յին գործկոմի առաջ և աշխատում է նրա ղեկավարության տակ։ Բացի այդ, գյուղխորհրդի ընտրության հետ միաժամանակ գյուղի աշխատավոր բնակչությունն ընտրում է նաև վերստուգիչ հանձնաժողով, որը պետք է հսկի խորհրդի աշխատանքների վրա։ Կարիք յեղած դեպքում, հանձնաժողովը կարող է ստուգել այդ աշխատանքները, հաշիվ պահանջել և այլն։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Ցույց տվեք աշխատանքների (քաղխորհրդի և գյուղխորհրդի) միջև յեղած նմանությունը և տարբերությունը։

2. Նկարագրեցե՛ք ձեր գյուղխորհրդի կառուցվածքը. քանի՞ պատգամավոր ունի, ո՞վ են նախագահները (նրանց կուսակցականությունն ու զբաղմունքը), ի՞նչ սեկցիաներ կամ հանձնաժողովներ են աշխատում և իրենց աշխատանքների մեջ վորևէ դրական հետևանքի հասե՞լ են, արդյոք, նրանք։ Մասնակցո՞ւմ եք, արդյոք, դուք սեկցիոն աշխատանքներին։

3. Ի՞նչ է արել ձեր խորհուրդը՝ աշ-

խատավորության լայն մասսաներին խորհրդային շինարարության մասնակից դարձնելու համար։ Հաշիվ տալիս ե, արդյոք, խորհուրդը քաղաքացիների ընդհանուր ժողովին (հասարակական ժողովին)։ Գյուղխորհրդի ընդլայնված նիստեր կազմակերպվո՞ւմ են, արդյոք, և դուք այդ նիստերում լինո՞ւմ եք, թե վոչ։ Չի՞ յեղել, արդյոք, ձեզնում պատգամավորին վաղաժամ յետ կանչելու դեպք ե ի՞նչ պատճառներով։

Բոլոր այս հարցերի պատասխանները համախմբեցե՛ք՝ «Մեր խորհրդի նվաճումներն ու թերությունները աշխատանքի ասպարեզում» վերնագրով մի զեկույցի մեջ։

4. Գնացե՛ք գյուղխորհրդի նիստերից մեկն ու նրա մասին համառոտ հաշվետվություն կազմեցե՛ք։ Ցույց տվե՛ք, թե ինչ հարցեր քննվեցին և ինչ վորոշումներ հանվեցին։ Ուղի՞ղ են, արդյոք, այդ վորոշումները և ինչու դուք ուղիղ եք համարում։

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆԵԼԸ

Գյուղխորհուրդների մեջ և խորհուրդների գավառական համագումարների համար արվող

ընտրությունները ղեկավարելու համար, կազմակերպվում են գյուղական և գավառակային ընտրական հանձնաժողովներ։

Այս հանձնաժողովների կարևորագույն պարտականություններից մեկն ընտրական իրավունքներից զրկվածների ցուցակ կազմելը, ստուգելն ու հայտարարելն է։

Ցուցակում նշվում է՝ ազգանունը, անունը, հայրանունը և տարիքը. ինչով է պարապել մինչև Փետրվարյան հեղափոխությունը. ինչով է պարապում ներկայումս. ընտրություններից հեռացնելու պատճառները։

Գյուղական հանձնաժողովը պարտավոր է ուշի-ուշով ստուգել կազմած ցուցակները և նրանց մի օրինակը հանձնել իր գյուղխորհրդին, իսկ մյուսն ուղարկել գավառակային ընտրական հանձնաժողովին։ Սրա հետ միաժամանակ, և ոչ ուշ քան վերընտրություններից մեկ շաբաթ առաջ, ընտրական իրավունքներից զրկվածների ցուցակները փակցվում են գյուղի աչքի ընկնող տեղերից մեկում (գյուղխորհրդի դռանը և այլն) որ ամեն մարդ կարողանա տեսնել և կարդալ այդ ցուցակները։

Ցուցակների մեջ մտցվածները, ցուցակը հայտարարելուց հետո չերեք

որվա ընթացքում, կարող են գյուղական ընտրական հանձնաժողովների վորոշման դեմ բողոք տալ գավառակային հանձնաժողովին և հետո—անխտիր կերպով, մինչև նահանգական հանձնաժողովը։ Ընդ վորում, բողոքը պետք է ներկայացվի հենց այն հանձնաժողովի միջոցով, վորի վրա անբավական կողմը գանգատվում է։

Ընտրական իրավունքներից զրկվածների ցուցակները կազմելուց հետո, առանձին ընտրական ժողովներ են կազմակերպվում։

Այս ժողովներում ընտրական հանձնաժողովը պետք է հանգամանորեն պատմի ժողովականներին ընտրությունների կարգը, բնակչության ընտրական իրավունքները, այլև այն, թե ինչ է անելու ընտրվող գյուղխորհուրդը և ինչ խնդիրներ ունի այն։

Դրանից անմիջապես հետո, ժողովի նախագահն ի լուր ամենքի կարդում է ընտրություններին մասնակցելու իրավունք չունեցողների ցանկը։

Հենց այստեղ կարելի յե նշել ցուցակի անճշտությունները. օրինակ, այն, վոր ցուցակի մեջ մտցված չի ընտրական իրավունք չունեցող վորևե քաղաքացի։

Թե հենց ժողովում և թե նրանից դուրս արված բոլոր այդ նկատողությունները ընտրական հանձնաժողովը պարտավոր է լսել և քննության առնել շահագրգռված քաղաքացիների ներկայությամբ։

Այստեղ եւ կարելի չէ քննության առնել գյուղխորհրդի համար դրված թեկնածուներին կամ նույնիսկ նրանց ամբողջ ցուցակները։

Դրանից հետո, ընտրական իրավունքներից զրկվածների ուղղված ցուցակները նորից պետք է փակցվեն գյուղխորհրդի շենքում և հասարակական այլ վայրերում։

Ընտրական ժողով հրավիրելու օրի և ընտրությունների օրի մասին ընտրական հանձնաժողովը պարտավոր է հայտնել բնակչությանը վոչ ուշ, քան 13 ժամից առաջ։ Այս կանոնը խիստ կերպով է պահպանվում, այլապես ընտրությունները կարող են բեկանվել։

Ընտրական ժողովին կարող են ներկա գտնվել միայն ընտրական իրավունք ունեցողները. բոլոր կողմնակի անձինք պետք է հեռանան։ Բանալով ընտրական ժողովը, նախագահը ընտրողներին ծանոթացնում է ընտրությունների կարգին և այնուհետև կարդում է ընտրական իրավունքից զրկվածների վերջնական ցանկը,

ինչպես և գյուղխորհրդի համար գրված առանձին թեկնածուների անունները կամ թեկնածուների ցուցակները։

Յեթե ժողովը հարկավոր գտնի, կարելի յե քննության առնել գրված ամեն մի թեկնածու. ինչ պակասություններ ունի նա, արժե՞, արդյոք, նրան խորհրդի համար ընտրել և այլն։ Ընդ վորում, կարող ե պատահել, վոր թեկնածուներից մի քանիսին՝ հարց լինի նույնիսկ բոլորովին հեռացնել ընտրություններից։

Սրանից անմիջապես հետո անցնում են բուն ընտրություններին։ Ամեն մի ընտրող ձայն ե տալիս այս կամ այն թեկնածուին, այս կամ այն ցուցակին։

Թե ինչ կարգով ե կատարվում ձայներ հավաքելը,—թերթիկների՞ միջոցով, քարերով, ձեռ բարձրացնելով, գաղտնի կամ բաց,—նահանգական ընտրական հանձնաժողովը վաղորոք հայտնում ե այդ մասին։

Ընտրված համարվում ե նա, ով ձայների պարզ մեծամասնություն ե շահել, թեկուզ հենց մեկ ձայնի մեծամասնություն (որինակ՝, 100 թեր և 99 դեմ)։ Յեթե ձայներ հավաքելը ցուցակներով ե կատարվում, անցնում ե այն ցուցակը, վորը ձայների նույնպիսի մեծամասնություն ե շահել։

Բացի այդ, ընտրական հանձնաժողովն ընտրում է նաև պատգամավորների թեկնածուներ, պատգամավորների ընդհանուր թվի մեկ յերրորդի չափով։

Ընտրություններից հետո ընտրական հանձնաժողովի առանձին արձանագրություն է կազմվում, ժողովի նախագահի և քարտուղարի ըստորագրությամբ։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՆԵՐ

1. Նկարագրեցե՛ք ձեր խորհրդի վերջին վերընտրությունները. յե՞րբ է սկսվել վերընտրական կամպանիան և ինչո՞ւմն էր նրա էությունը։ Յե՞րբ և վո՞րտեղ են փակցված յեղել ընտրական իրավունքից զրկվածների ցուցակները։ Ո՞ւմից եր բաղկացած ընտրական հանձնաժողովը։ Այս հանձնաժողովին բողոք տրվե՞լ են, արդյոք, ընտրական իրավունքից սխալ կերպով զրկելու մասին։ Այդ բողոքների հիման վրա ի՞նչ վորոշումներ է կայացրել ընտրական հանձնաժողովը։ Յե՞րբ և վո՞րտեղ են տեղի ունեցել վերընտրությունները։ Մանրամասն նկարագրեցեք վերընտրությունների կարգը։

2. Մասնակցե՞լ եք դուք, արդյո՞ք, վերընտրական հանձնաժողովին և ինչո՞վ է արտահայտվել ձեր մասնակցությունը։ Կամպանիան անցկացնելու մեջ ի՞նչ թերություններ եք նկատել դուք։

3. Ճի՞շտ կերպով է, արդյո՞ք, զրկվել ընտրական իրավունքից այն առևտրականը, վորն այժմ վերջացրել է իր առևտուրը, վոչ մի տեղ չի ծառայում և հայտնի չի, թե ինչ միջոցներով է ապրում, յեթե նրա մասին միաժամանակ հայտնի յե, վոր նա թշնամաբար է վերաբերվում դեպի խորհրդային իշխանությունը։

XI

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Վորքան էլ լավ լինի հաջողված բանվորներին ու գյուղացիներին՝ կարգավորել խորհրդային իշխանությունը կենտրոնում և տեղերում, առանց կոմունիստական կուսակցության ղեկավարության մեր պետությունը չեր կարող ազատվել իր բազմաթիվ թշնամիներից և չեր կարող վերականգնել իր տնտեսությունը։ Ավելի

ճիշտը՝ պետությունը կկործանվեր, ինչպես, օրինակ, Հունգարական խորհրդային հանրապետությունը կործանվեց։

Այդպիսի բան չի յեղել և չեր էլ կարող լինել, վորովհետև Հոկտեմբերյան հեղափոխության առաջին իսկ օրից կոմունիստական կուսակցությունը, հանձինս իր առաջնորդ Լենինի, ամուր ձեռքով՝ անշեղ ու արթուն կերպով ղեկավարել ե մեր յերկրի սոցիալիստական շինարարությունը։

Դժվար օրերին կուսակցությունը մոբիլիզացիայի յե յենթարկել հազարավոր ու տասնյակ հազարավոր իր անդամներին և ուղարկել ռազմական ու տնտեսական ճակատների ամենավտանգավոր—թշնամու հետ դաժան բախումի ամենախիտ տեղը, կռվելու՝ քաղցի, ցրտի, տնտեսության անկայունության ու փլուզումների դեմ։ Ամեն տեսակի միջոցներով ու ձևերով կուսակցությունը բանվորներին ու գյուղացիներին կազմակերպել, ներշնչել, վոգևորել ե դեպի նոր հաղթանակները, դեպի նոր նվաճումները։

Կուսակցության անդուլ հսկողության ու նրա յեռանդի շնորհիվ ե միայն, վոր բանվորներն ու գյուղացիները վոչ թե իրարից բաժանվեցին, այլ, ընդհակառակը, ընդմիշտ ամրացրին իրենց սերտ միությունը, շաղկապը։ Կուսակցու-

թյան սրատես աչքերի շնորհիվ է միայն, որ մեր խորհրդային Միությունը կարողացավ իր ժամանակին կանխել մի ամբողջ շարք տնտեսական բարդություններ և ուրիշ պետությունների հետ հնարավոր ընդհարումներ ու արագ կերպով կարգավորել խորհրդային շինարարության բազմաթիվ դժվարությունները։

Վարից-վեր բոլոր հիմնարկները, բանակը, նավատորմիղը, պետական առևտուրն ու արդյունաբերությունը - ամեն ինչ կուսակցության միասնական կամքն իր միջով է անցկացնում, ամեն ինչի ուղղություն տալիս։

Ստացվում է նույն այն դրությունը, որի մասին Վ. Ի. Լենինը գրել է.

«Մ ե ն ք պ ե տ ք է գ ի տ ե ն ա ն ք և հ ա ս կ ա ն ա ն ք, ո ր խ ո ր հ ր դ ա յ ի ն հ ա ն ր ա պ ե տ ո ւ թ յ ա ն ո ղ ջ ի ր ա վ ա կ ա ն և ի ր ա կ ա ն ս ա հ մ ա ն ա դ ր ո ւ թ յ ո ւ ն ը կ ա ռ ո ւ ց վ ո ւ մ է ա յ ն բ ա ն ի վ ր ա, ո ր կ ու ս ա կ ց ո ւ թ յ ո ւ ն ն ա մ ե ն ի ն չ մ ի ս կ զ բ ո ւ ն ք ո վ է շ տ կ ո ւ մ, ն շ ա ն ա կ ո ւ մ և կ ա ռ ո ւ ց ո ւ մ, ո ր պ ե ս զ ի պ ր ո լ ե տ ա ր ի ա տ ի հ ե տ կ ա պ ո ւ ն ե ց ո ղ կ ո մ ո ւ ն ի ս տ ա կ ա ն տ ա ր ր ե ր ը կ ա ր ո ղ ա ն ա ն ա յ դ պ ր ո լ ե տ ա ր ի ա տ ի ն ի ր ե ն ց ո գ ո վ ս ն ո ւ ց ա ն ե լ» (Լ ե ն ի ն, հ ա տ. XVIII. էջ 181)։

Միաժամանակ խոշոր նշանակություն ունի

կուսակցության յերկաթե դիսցիպլինան։ Շնորհիվ այս դիսցիպլինայի, կոմունիստներն, առանց վորևե փոփոխության ու տատանումների, անշեղ կատարում են կուսակցության ղեկավար ցուցմունքները։

Այնուամենայնիվ, Համ. ԿԿ (բ.) ամենևին էլ չի ձգտում, վոր բոլոր խորհուրդները, բոլոր պետական հիմնարկները, խորհրդային բոլոր պաշտոններն անպատճառ բացառապես կուսակցության անդամներով լրացվեն։

Ահա թե ինչ է ասել այս հարցի շուրջը Լենինը.—

«Մեզ համար կարևորն այն է, վոր բոլոր աշխատավորներին պետություն կառավարելու ասպարեզ քաշենք։ Հըսկայական դժվարություն ունեցող մի խնդիր է այդ։ Կուսակցական փոքրամասնությունը չի կարող սոցիալիզմը մտցնել։ Այն կարող են մտցնել տասնյակ միլիոնները, յերբ նրանք կսովորեն ամեն ինչ իրենքերն անելու» (Լենին, հատոր XV, եջ 154)։

Ահա թե ինչու կուսակցությունն անշեղ անց է կացնում աշխատավորության ամենալայն մասսաների ինքնագործունեության պահանջը։ Կուսակցությունը պնդում է, վոր ան-

կուսակցական բանվորներն ու գյուղացիներն պետությունն կառավարելու ասպարեզում ամենամոտիկ մասնակցությունը պետք է ունենան։ Նրանցից լավագույններին կուսակցությունն առաջ է քաշում պետական ամենապատասխանատու պաշտոնների համար։

Այժմ արդեն պարզ է, թե ինչ է լինելու Համ Կ. Կ. (բ.) և Համ ԼԿՅԵՄ-ի աշխատանքների էությունը գյուղական բջիջների խորհուրդներում։

Բջիջը գյուղական աշխատանքներին մասնակցում է կոմունիստների-խորհրդի անդամների միջոցով, վորոնք ստեղծում են խորհրդի կոմունիստական ֆրակցիա։ Այս ֆրակցիան խորհրդի մեջ բջիջի ցուցմունքով է աշխատում։ Ուստի Համ ԿԿ. և Համ ԼԿՅԵՄ-ն ամենից առաջ ձեռք են առնում բոլոր տեսակի միջոցները, գյուղխորհրդի ներսում աշխատանքները բարելավելու համար. կարգավորում են ընթացիկ աշխատանքները, մանրամասն քննում և մշակում են բոլոր գլխավոր հարցերը և այլն։

Բայց գյուղբջիջում կոմունիստները չափազանց քիչ են և նրանք չեյին կարող անկուսակցականների տեղ կատարել ամբողջ աշխատանքը։ Հարկավոր էլ չի այդ։ Այդ վնասակար կլիներ բանվորա-գյուղացիական գործի համար։ Լենինը

բազմիցս ասել է, թե կարիք էլ չկա կարծելու, որ իբր թե միմիայն կոմունիստների ձեռքով մենք կարող ենք սոցիալիզմ կառուցել։

Գյուղական բջիջների նպատակն այն է, որ բոլոր չքավորներին ու միջակներին, գեղջկուհիներին մասնակից դարձնեն ընտրությունների և ստեղծեն խորհրդային կուռ մեծամասնություն։

Բջիջները շարունակ պետք է բնակչության մեջ ինքնագործունեություն արթնացնեն, նրան այս կամ այն օգտակար միտքը թելադրեն։ Ոչ թե հրամայեն, այլ ուղղակի ղեկավարեն աշխատավոր բնակչության խորհրդային աշխատանքները։

Համ. Կ. Կ. և Համ ԼԿՅԵՄ-ի գյուղական բջիջների ամենից կարևոր նպատակն այն է, որ գյուղի լավագույն, առաջադեմ մարդկանց մասնակից դարձնեն խորհրդների, սրանց սեկցիաների ու հանձնաժողովների աշխատանքներին, որ ջոկեն նրանց գյուղական ամբոխի միջից, և աստիճանաբար պատրաստեն սոցիալիզմի աշխատանքների համար։

Չափազանց պատասխանատու գործ է այդ, և հաջողությամբ կատարելու համար գյուղական կուսակցականները շատ ջանքեր պետք է թափեն իրենց վրա։ Գյուղի կուսակցական կազմակերպությունների անհրաժեշտ է ամեն կերպ բարելավել

իրենց վորակական մակարդակը, իրենց քաղաքական հասունությունը, իրենց ակտիվությունն ու կազմակերպվածությունը։ Այս միջոցով նրանք կարող են բարձրացնել իրենց հեղինակությունը գյուղացիական մասսաների աչքում և իրենց ազդեցությունը նրանց վրա։ Իսկ դրա մեջ էլ— կուսակցության հաջող աշխատանքի գրավականն է գյուղում։

Մի խոսքով, գյուղական կուսակցական և կոմյերիտական բջիջները պետք է ղեկավարեն գյուղական վողջ հասարակայնությունը։ Այս նպատակով, նրանք պարտավոր են, մի կողմից, շարունակել պայքարն ընդդեմ ռազմական կոմունիզմի ձևերի, նշանակումների, հրամաններ արձակելու և այլն, մյուս կողմից—գյուղի զանազան շերտերի քաղաքական պայքարից հեռու չփախչեն, գյուղացության քաղաքական կյանքի պոչից չկպչեն։ Ընդհակառակը, բջիջները պետք է ուժեղացնեն իրենց ուշադրությունը դեպի գյուղական հասարակայնությունը, ղեկավարեն այն, և կարողանան խորհրդային հունի մեջ դնել։

Կուսակցության՝ խորհրդային աշխատանքների նպատակներն ամենից լավ արտահայտել է Վ. Ի. Լենինը։ Ահա նրա խոսքերը.

«Աշխատանքներին դեռ մասնակից չդարձրած բանվորների ու գյուղացի-

ների ամեն մի նոր շերտ—մեր ամենահավատարիմ բարեկամներն ու դաշնակիցներն են։ Մենք այժմ ստիպված ենք պետություն կառավարելու գործում ամեն մի քայլափոխում այդ շերտերի վրա հենվել։ Մենք նորից և նորից պետք է դիմենք անկուսակցական բանվորներին ու գյուղացիներին վոչ թե նրանց միանգամից մեր կողմը քաշելու նպատակով, մեր կուսակցության մեջ քաշելու համար,—մեզ համար կարևոր չի այդ,—այլ նրանց մեջ այն գիտակցությունն արթնացնելու նպատակով, թե յերկրի փրկության համար նրանց ոգնությունն է հարկավոր։ Յերբ մենք նրանց մեջ, վորոնց կալվածատերերն ու կապիտալիստներն ամենից քիչ եյին թողնում պետություն կառավարելու ասպարեզ,—յերբ մենք նրանց մեջ արթնացնենք այն գիտակցությունը, թե նրանց կանչում ենք Սոցիալիստական Հանրապետության ամուր հիմքը միասին կառուցելու, ահա այն ժամանակ մեր գործը վերջնականապես անհաղթելի կլինի»։

ՀԱՎԵԼՎԱԾ

ԽՍՀՄ-ի ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնող հանրապետությունների և մարզերի այբբենական ցանկը։

I ԴԱՇՆԱԿԻՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԲԽՍՀ (Բելոռուսիայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն)։

2. ԱԽՖՍՀ (Անդրկովկասյան Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն).

3. ՌԽՖՍՀ (Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն).

4. Թուրք. ԽՍՀ (Թուրքմենստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն)։

5. Ուզ. ԽՍՀ (Ուզբեկստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն)

6. ՈւԽՍՀ (Ուկրայնայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն).

II ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 1)

1. Աջարստանի ԻԽՍՀ (մտնում է Վրաստանի ԽՍՀ մեջ (ԱԽՖՍՀ).

1) Փակագծերի մեջ ցույց է տրված, թե ամեն մի ինքնավար հանրապետություն կամ մարզ դաշնակից վոր հանրապետության մեջ է մտնում։

2. Բաշկիրիայի ԻԽՍՀ (ՌԽՖՍՀ)
3. Բուրյաթ–Մոնղոլական ԻԽՍՀ (ՌԽՖՍՀ)
4. Դաղստանի ԻԽՍՀ (ՌԽՖՍՀ)
5. Կազակների ԻԽՍՀ (ՌԽՖՍՀ)
6. Կարելի ԻԽՍՀ (ՌԽՖՍՀ)
7. Կիրգիզիայի ԻԽՍՀ (ՌԽՖՍՀ) գտնվում է միջին Ասիայում
8. Ղրիմի ԻԽՍՀ (ՌԽՖՍՀ)
9. Մոլդավիայի ԻԽՍՀ (ՈւԽՍՀ)
10. Նախիջևանի ԻԽՍՀ մտնում է Ադրբեջանի ԽՍՀ մեջ (ԱԽՖՍՀ)
11. Մերձվոլգյան Գերմանացիների ԻԽՍՀ (ՌԽՖՍՀ)
12. Տաջիկների ԻԽՍՀ (ՈւզԽՍՀ)
13. Թաթարստանի ԻԽՍՀ (ՌԽՖՍՀ)
14. Չեչենիայի ԻԽՍՀ (ՌԽՖՍՀ)
15. Հարավ-Ոսեթիայի ԻԽՍՀ մտնում է Վրաստանի ԽՍՀ մեջ (ԱԽՖՍՀ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Առաջ մեր յերկիրը կառավարում եյին թագավորը, կալվածատերերն ու կապիտալիստները։

II. Ով վոչինչ եր, նա յե լինելու ամեն ինչ։

III. Բանվորների և գյուղացիների քաղաքական իրավունքները.

Ընտրական իրավունք․

Խորհրդների համար ընտրելու իրավունքից զուրկ է գրկված։

Ո՞վ է ընտրում խորհուրդների համար։

Մամուլի ազատություն

Խղճի ազատություն

Ժողովների ազատություն

Միությունների ազատություն

Գիտության իրավունք

IV․ Խորհրդային Հանրապետությունն աշխարհում ամենաազատ յերկիրն է։

Աշխատավոր օտարերկրացիների իրավահավասարությունը

Ապաստանի իրավունք

V․ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն (ԽՍՀՄ) Դաշնակից հանրապետությունների մեջ կնքված դաշնագրերի հիմունքները։

VI․ ԽՍՀՄ-ի բարձրագույն իշխանությունը։

Խորհուրդների ԽՍՀՄ-ի համագումար

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի պրեզիդիում։

VII․ Բանվորա-գյուղացական կառավարությունը

Առաջ և հիմա

Ժողովրդական կոմիսարներ

Առանձին ժողկոմատների աշխատանքը

Ժողովրդական Կոմիսարների խորհուրդ

ԽՍՀՄիության գերագույն դատարան և պետքաղվարչություն։

VIII. ՌԽՖՍՀ և դաշնակից մյուս հանրապետությունների կենտրոնական խորհրդային իշխանություն։

Խորհուրդների Համառուսական համագումար։

Խորհուրդների համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտե։

Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ և Ժողովրդական Կոմիսարներ։

Ինքնավար հանրապետություններ

IX. Խորհրդային Իշխանությունը տեղերում

Խորհուրդների Համագումարներ։

Գործկոմներ։

Խորհրդային Իշխանությունը տեղերում ինչ գործ է վարում։

Պայքար բյուրոկրատության դեմ

Գավառային գործկոմ

X. Խորհուրդներ

Քաղխորհուրդներ

Գյուղխորհուրդներ

Ընտրություններ անելը։

XI. Կոմունիստական կուսակցությունը։

Կոմյերիտմիությունը և խորհուրդները

ՀԱՎԵԼՎԱԾ

ԽՍՀՄ պետական կառուցվածքի մեջ մտնող ինքնավար հանրապետությունների այբբենական ցանկը)։

ՀՍԽՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0045304

[5Թկ.]

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

A 1/8435